

1573

83

\$ - 78



610

Вартъ-Патрикозъ

№ 4 (16) ՀԻՐԱՏ. Ի ԲԺ. Ա. ԲՈՒԳՈՒԳԵՆՆԻ № 4 (16)



Մ Ի Ն Ի Օ Ն,
Ե Ր Ա Ժ Ծ Տ Ի Ա Ղ Զ Ի Կ Ը
ՊԱՏՄԻԱԾՔ ՖՅՆ-ՌՕՂԷՆԻ


Գինը 20 կոպեկ

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7
1916

Մ Ի Ն Ի Օ Ն, Ե Ր Ա Ժ Շ Տ Ի Ա Ղ Ջ Ի Կ Ը

ՊԱՏՄԻԱԾՔ ՖՕՆ-ՌՕԴԷՆԻ

Թարգմ. ԱԹ. ԽՆԿՈՅԵԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7
1916

1779
 19330
 1779
 19330
 1779
 19330

Յարմ. Պատրիարք.



Զ Ա Ր Կ Ի Ն Ը

Նոյեմբերի ցուրտ օրերից մէկն էր: Փշում էր սաստիկ քամին: Ինչներ չէր անում այդ չարածին: Մէկի հովանոցն էր խլում ձեռքից, միւսի գլխարկն էր թռցնում: Գլխարկը գլորւում էր, տէրն էլ ետեից վազում էր: Հրապարակի վրա, քաթանի ծածկոյթի տակ, կուշ էր եկել խնձոր ծախող կինը: Յանկարծ քամին մի ուժեղ թափով քշեց ծածկոյթը: Կինը խնձորի զամբիւղը ձեռքին վազեց ծածկոյթի ետեից, սայթաքեց, վայր ընկաւ, խնձորները շուռ եկան, գլորւեցին սառած ճամփի վրա: Երեխաները դէսից դէնից վրա թափւեցին և հաւի նման վեր քաղեցին խնձորները: Այդտեղ նրանք վիճեցին, իրար հրհրեցին, բռնեցին և իրենք էլ սայթաքեցին, գլորւեցին գետին:

Լուսամուտում նստած հացթուխը չիբուխը բերնին տեսնելով այդ պատկերը, բարձր քրքռում էր:

Այդ ժամանակ մի մարդ լուսամուտը բաղխեց:

—Այ կին, լուսամուտը բաց արա, տես ո՞վ է:

Լուսամուտի առաջ կանգնած էր մի փոքրիկ, լղարիկ մարդուկ, որ ողորմելի տեսք ունէր: Դա ջութակահար էր, որ ապրում էր նրանց տան ետեի ֆլիգելում. նա երկու բուլկի էր ուզում, նա դողում էր ցրտից, իսկ երբ ձեռները մեկնեց բուլկիներին, խեղճին բռնեց մի այնպիսի սաստիկ հագ, որ ստիպւած էր յենւել պատին:

Հացթուխի կինը կատարելապէս անտարբեր նայում էր թշուառին: Նա արդէն հինգ տարի էր, որ ապրում էր նրանց տանը և կինը ընտելացել էր նրա ողորմելի տեսքին, որ այս անգամ աւելի թշուառ երևաց: Ինչպէս երևում էր, խեղճի մահը



102-865-42

(3953 - 2007) 1746-2007

մօտեցել էր: Կինը բուկկինները լուսամուտից դուրս դրեց և շտապով լուսամուտը շխկալէն վրա դրեց:

Հացթուխը, լսելով երաժշտի հազը, դուրս եկաւ, մօտեցաւ հիւանդին, ձեռքը դրեց նրա ուսին և քաղցրութեամբ ասաւ.

—Ներս մտէ՞ք սենեակ, տաքացէ՛ք: Այդպէս հազ ունեցողը չը պէտք է այդպէս բարակ հագած դուրս գայ: Դուք ամրակազմ մարդ չէ՞ք:

Երաժիշտը հլու, ինչպէս մի մանուկ, հետեց տանտիրոջը: Այդ այցելութիւնը իսկի էլ չուրախացրեց տանտիրուհուն: Նրա ինչ գործն էր թէ մի ուրիշը վիշտ ու ցաւ ունի: Նա իր կեանքում իսկի մէկին բարիք չէր արել. նա մտածում էր միմիայն իր և իր երեխաների մասին, նամանաւանդ իր սիրելի, իր մեծ որդի Բրունօի մասին, որին պաշտում էր և երես էր տալիս. Բոլոր աղքատներին նա մուրացկաններ էր անւանում: «Այսօր եթէ մէկին մի բան տամ, վաղը հարիւրներով կը թափւեն», — ասում էր նա.

—Մի բաժակ գինի խմեցէ՛ք, — սիրով առաջարկեց հացթուխը, — դա ձեզ կը կազդուրի:

—Ի՞նչ ես անում, — բարձր ձայնով ասաւ կինը, — դա Բրունօի գինին է: Երբ որ երեխի դասերը շատ են լինում, մի բաժակ տալիս եմ, որ ուժերը կազդուրւեն. — ասաւ ու մօտեցաւ մարդուն, որ նրա ձեռքից խլի:

—Ես այդ շատ լաւ եմ հասկանում, բայց միթէ դա պակաս օգտաւէտ կը լինի հիւանդ մարդու համար: Մնացած գինին տարէ՛ք ձեզ հետ, տանը կը խմէք: Երբ որ այս գինին վերջանայ, ես նորը կուղարկեմ:

Հացթուխը զօռով շիշը յանձնեց երաժշտին, որ երկչոտ հայեացքով նայում էր բարկացած տանտիրուհու վրա: Այդ բոլորը չէր: Վերցրեց մի թղթէ տոպրակ, մէջը մի քանի հաց դրեց և վրէն էլ չամշով մի բլիթ ու ասաւ. — Սա էլ տարէ՛ք ձեր աղջկան: Նա էլ հիւանդոտ տեսք ունի:

—Իհարկէ, զարմանալի չէ որ նա այդպէս է, — ծաղրելով ասաւ կինը. — երաժշտութիւնից դեռ ոչ ոք չէ հարստացել: Ձեր

տանը առաւօտից մինչև երեկոյ երգ ու խաղ է: Դուք իմացէ՛ք որ ձեր վերի յարկում ապրող կօշկակարը գանգատաւոր է ձեզանից: Նա ասում է որ Նոր Տարուց յետոյ կը թողնի իր բնակարանը, եթէ շարունակի այդ երաժշտութիւնը:

—Մի քիչ էլ համբերեցէ՛ք տիկին, — աղաչում էր երաժիշտը, — մնացած վարձը կը վճարեմ: Հէնց որ մի քիչ ուղղւել եմ, շատ կաշխատեմ: Միւս շաբաթ արդէն ես նւագախմբի մէջ պէտք է մտնեմ: Տեսուչը արդէն ինձ առաջուց երեք մարկ փող է վճարել:

Եւ նա գրպանից փողը հանեց:

—Դրանք դատարկ-դատարկ խօսքեր են, — խստութեամբ պատասխանեց տանտիրուհին:

—Ո՛հ, ո՛չ, ճիշտն եմ ասում, միայն ի սէր Աստուծոյ բնակարանից ինձ դուրս մի անէ՛ք: Եթէ կօշկակարը չի ուզում լսել իմ աղջկայ վարժութիւնները, լաւ, իմ աղջիկը էլ չի նւագի: Իմ փոքրիկ Մինիօնը... ոչ: Բայց նա կը վշտանայ... ջութակը նրա միակ ուրախութիւնն է:

—Լաւ, լաւ, հանգստացէ՛ք, կինս այդ չէր ուզում ասել: Ձեզ դուրս անելու համար խօսք չի կարող լինել: Աստուած ձեզ հետ, հանգիստ տուն գնացէ՛ք:

Հացթուխը առաջնորդեց թշուառին մինչև դուռը: Չութակահարը շնորհակալ եղաւ և գնաց: Դուրսը դարձեալ ոռնում էր մրրիկը: Հացթուխի կինը կատաղութեամբ նայում էր նրա ետեւից և կատւին, որ ընկել էր ռոտների տակը, ոտի մի հարւածով շարտեց դէպի դուռը: Չար կինը մէկի վրա պէտք է թափէր իր բարկութիւնը:

II.


ԵՐԱԺԻՇՏՆ ՈՒ ԻՐ ԱՂՋԻԿԸ

Կամաց բարձրանում էր ջութակահարը իր բնակարանի սանդուխտներով: Նրա շունչը կտրւում էր. քանի անգամ կանգնեց շունչ քաշելու: Նա սաստիկ ծակոցներ էր զգում կող-

քում: Բայց երբոր նրա ականջին հասաւ ջութակի ձայնը, նա մոռացաւ իր ցաւերը, կանգ առաւ և սկսեց լսել:

— Ի՞նչպէս լաւ է նւագում, հրաշք. ի՞նչ սիրտ ու հոգի. իմ թանկագին Մինիօն, դու մեծ երաժշտուհի կը դառնաս, — փսփոսաց նա և նրա տօգոյն աշտերը կարմրին տւին, իսկ աչքերը ուրախութիւնից փայլեցին:

Նա կամաց բաց արեց դուռը և հէնց որ տեսաւ աղջկան նւագելիս, սիրտը թրթռաց:



— Շատ լաւ նւագեցիր այդ կտորը, — ընդհատեց հայրը նւագածութիւնը և նստեց անկողնու ծայրին:

— Ախ հայրիկ, դժ. ես, — բացականչեց փոքրիկը: Իր նւագով այնպէս էր տարւել, որ չէր նկատել հօր գալը: — Դու լսեցիր, հա: է, ի՞նչ, հիմա աւելի լաւ դուրս եկաւ քան թէ առաւօտեան:

Հայրը լուռ, գլխով հաւանութիւն տւեց, գրկեց աղջկան

և տխուր նայում էր նրան և մտքումը ավստսում էր որ շուտով այլեւ բոլորովին նւագելու չէ:

— Ապա նայիր, տես՝ ինչ եմ բերել քեզ համար, — ասաւ հայրն ու հանեց բլիթը:

— Ի՞նչ հրաշալի բլիթ է, և ի՞նչքան շամիչ կայ վրան: Գիտես, հայրիկ, կէսը քեզ կը հասնի: Եկ, սուրճ պատրաստենք:

— Այսօր դու պէտք է մենակ տանտիկնութիւն անես, ես շատ յոգնել եմ:

— Խեղճ հայրիկ, — ասում էր նա տխրութեամբ, նայելով հօր նիհար աշտին, — հանգիստ նստիր, ես սուրճը կեփեմ: Դու, ինչպէս երևում է, էլի սաստիկ հազացել ես: Սպասիր. երբոր ես մեծանամ, շատ փող կաշխատեմ, և այն ժամանակ մեծ տան մէջ կապրենք, ոսկէ կառքով ման կը գանք, ամեն օր լաւ ճաշ կունենանք: Ի՞նչ լաւ կը լինի, չէ, հայրիկ:

Աղջիկը գնաց կրակ անելու, հայրը պառկեց անկողնու վրա և աչքերը ծածկեց:

— Ինձ վատ եմ զգում... գինի տուր... այ այնտեղ է... հացթուխը տւեց... Բաժակը բեր:

Մինիօնը բաժակով գինին տւեց հօրը: Խեղճի ձեռքը այնպէս սաստիկ էր դողում, որ չը կարողացաւ բաժակը պահել: Աղջիկը վախեցած նայում էր նրա վրա:

— Հայրիկ, ի՞նչ պատահեց: Դու այնպէս գունատ ես, ինչպէս մայրիկը մեռնելիս: Հայրիկ, իսէր Աստծու, միայն թէ մի մեռնիր:

— Հանգստացիր, աղջիկս, լաց մի լինի, — ասում էր նա դժարութեամբ: — Մօտեցրու գինին շրթունքներին... այ այդպէս...

Նա մի երկու անգամ կում արաւ, բայց հագիւ կարողացաւ կուլ տալ:

— Հիմա, այ կը լաւանամ: Նստիր ինձ մօտ, իմ թանկագին Մինիօն: Միշտ խոնարհ և խելօք աղջիկ եղիր:

Աղջիկը սեղմւեց հօր կրծքին և քնքօրէն նայում էր նրա վրա:

— Խոստանում եմ քեզ, հայրիկ, որ սրանից յետոյ միշտ խոնարհ և հնազանդ կը լինեմ, — ասում էր Մինիօնը հեկեկալով, գրկած հօրը: — Ես կաշխատեմ լաւ նւագել և իմ առաջադիմութիւնով կուրախացնեմ քեզ:

— Ոչ... երբ ես գնացած կը լինեմ մայրիկիդ մօտ... այն ժամանակ էլ լաւ եղիր... առանց ինձ: Մենք միշտ քեզ հետ կը լինենք, թէև դու մեզ չես տեսնի:

Նա ձեռքը դրեց աղջկայ գլխին, ասես թէ օրհնում էր նրան: Աչքերը յառած էին դէպի երկինք, իսկ շրթունքները աղօթում էին թանկագին մանկան համար, որին անտէր-անտիրական էր թողնելու:

— Ոչ, դու ինձանից չես հեռանայ, հայրիկ, իմ անգին հայրիկ, — կանչում էր աղջիկը դողդոջուն ձայնով:

Հօր դէմքը գունատուել էր և մի տեսակ կերպարանափոխւել էր:

— Նւագիր իմ սիրած տաղը, Մինիօն, շուտ, քանի ուշ չէ, — հագիւ լսելի ձայնով շնջաց երաժիշտը, բայց Մինիօնը լսեց:

Նա վերցրեց ջութակը և հօր սիրած երգի հրաշալի ձայները հոսում էին իրար ետևից: Երբոր վերջին ձայնը կտրւեց, հայրը խփեց աչքերը և լիակատար հանգստի և խաղաղութեան արտայայտութիւնը հանգչում էր նրա գունատ դէմքի վրա: Աղջիկը կամաց տեղը դրեց ջութակը, որ հօրը չը զարթեցնի, և ոտների պճեղների վրա մօտեցաւ մահճակալին: Ձեռքերը խաչած, աչքերը հօր վրա գցած, նստելէր փոքրիկը անկողնու ծայրին:

— Հիմա, երբոր զարթնի, առողջացած կը լինի, — մտածում էր աղջիկը:

Բայց աւանդ: Նա էլ չը զարթնեց: Աշխարհի հոգսերից, դառն ցաւերից ազատւած, փոխւեց մի աւելի լաւ աշխարհ, թողնելով իր թանկագին աղջկան բոլորովին մենակ այս լայն աշխարհում:

III.

Ո Ր Բ Ը

Իրիկունը վրա հասաւ: Սենեակը մթնեց, ցրտեց, քամին տխուր փչում էր ծխնելոյզի մէջ: Աղջիկը սարսափում էր: «Գոնէ հայրիկը զարթնէր»:

— Հայրիկ, դու քնած ես:

Պատասխան չըկար:

— Դու էլի քնած ես, — ասաւ նա բարձրաձայն և վերցրեց հօր ձեռքը: Ձեռքը սառն էր, հայրն էլ անշարժ պառկած էր: Աղջիկը լաց եղաւ:

— Հայրիկ, թանկագին հայրիկ, պատասխանիր ինձ, — թափ էր տալիս հօր ձեռքը, — զարթիր, խնդրում եմ, զարթիր, ես սարսափում եմ:

Մանկան լացը և նրա երկչոտ ձայները գրաւեցին հարեւան լացարարի ուշադրութիւնը:

Հարեանուհին ներս մտաւ սենեակ, լամպը ձեռքին: Մօտենալով մահճակալին, նա հասկացաւ որ երաժիշտը մահացել է, և բացականչեց:

— Է՛, քո հայրը մեռել է: Եւ շատ լաւ է եղել, որ մեռել է այդ անբախտ մարդը, այս աշխարհի դառն ցաւերից ազատւել է: Աստուած թեթեւ մահ է տւել իրան, դրա համար շնորհակալ պէտք է լինի Նրանից:

Մինիօնը որ լսեց «մեռել» բառը, ճչաց:

— Ո՛չ, սուտ է, հայրիկը չէ մեռել, — և ընկաւ հօր վրա: — Հայրիկ, բաց արա աչքերդ, նայիր ինձ: Միայն թէ մի մեռնի մայրիկի պէս:

— Մեռելներին պէտք է հանգիստ թողնել, — ասաւ պառաւ և մի կողմ քաշեց աղջկան, — քո հայրը հանգստութեան արժանի է. կենդանի ժամանակ նա բաւական տանջւեց: Աստուած քեզ չի թողնի, նա որբերին չի մոռանայ:

Մինիօնը հոնգուր-հոնգուր լալիս էր: Նա հասկացել էր, որ կը գան սեւաշոր մարդիկ և հօրը կը տանեն, ինչպէս տաւրան մայրիկին:

Լւացարար կիսը կարեկցարար շոյում էր աղջկայ թշիկը:

— Գնանք ինձ մօտ, դու չես կարող այստեղ մենակ մնալ: Գուցէ դու ազգականներ էլ ունենաս. ես քեզ նրանց մօտ կը տանեմ:

Մինիօնը բացասաբար շարժեց գլուխը: Ճիշտ որ ամբողջ աշխարհում մի ազգական չունէր, որ նրա հոգսը տանէր: Մայրը հեռաւոր երկրից էր, Իտալիայից: Տամներկու տարի առաջ հայրը նւագախմբի հետ գնացել էր օտար երկիրներ համերգ տալու: Տուրին քաղաքում նա հիւանդացել էր և ստիպւած էր եղել այնտեղ մնալու: Բնակարան էր վարձել մի այրի կնոջ մօտ, որ մի ազգականուհի է ունեցել, մի գեղեցիկ աղջիկ: Այդ աղջկան սիրել էր և նրա հետ պսակւել: Աղջկայ անունն եղել էր Մինիօն: Մօր պատւին իր աղջկայ անունն էլ դրել էր նոյնպէս Մինիօն: Տատը վաղուց էր մեռել: Ոչ մայրն էր ազգականներ ունեցել և ոչ հայրը:

— Խեղճ աղջիկ, ի՞նչ ես անելու, ռձ կը լինի քո տէրը, քեզ պէտք է որբանոց տամ, հօ չի կարելի քեզ փողոցում թողնել, — ասում էր կիսը:

Մինիօնը չոքել էր մահճակալի մօտ և, ձեռքերով դէմքը ծածկելով, դառնազին լալիս էր:

— Վէր կաց, գնանք, — ասաց լւացարարը: Բայց աղջիկը չը վերկացաւ: Ուսերն ու ամբողջ մարմինը հեկեկոցից ցընցւում էր և յանկարծ նա աչքերը փակ, անշարժ ընկաւ յատակին: Նրա դեռ ջահել, թոյլ ջղերը տանել չը կարողացան այդ սաստիկ անսպասելի ցնցումները, նա ուշքը կորցրեց: Պառաւը վախեցաւ, կարծելով թէ աղջիկը մեռաւ: Բարձրացնելով նրան յատակի վրայից, նա տեսաւ որ աղջիկը կենդանի է և թոյլ շնչում է: Նա զգուշութեամբ տարաւ նրան իր սենեակը, խնամքով հանւեցրեց և դրեց իր մահճակալի վրա: Մի առժամանակից յետոյ Մինիօնը աչքերը բացեց և զարմանքով նայեց իր մօտ նստած կնոջ վրա, թէ ինչպէս է ինքը ընկել օտարի մահճակալի վրա: Ի՞նչ է եղել: Ո՞ւր է հայրիկը: Նա քաղց էր զգում: չէ որ ամբողջ օրը համարեա ոչինչ չէր կերել:

— Ես քաղցած եմ, — ասաւ նա:

Բարի կիսը կաթ ու հաց տւեց նրան: Աղջիկը ագահութեամբ խմեց կաթը, հացը կերաւ և նորից քաղցր քնեց:

— Երեխաների վիշտը խոր չի լինում, նրանք կարող են և՛ լաց լինել, և՛ ուտել, և՛ խմել, և՛ քնել: Եւ լաւն էլ այդ է: Փոքրիկ արարածները չեն կարող մեծ վիշտ տանել, — փսփսաց պառաւ կիսը:

Նա թեքւեց քնածի վրա և լսելով նրա համաչափ և հանգիստ շնչառութիւնը, ցած իջաւ սանդուխտներով և գնաց տանտիրոջ, հացթուխի մօտ:

Երբոր նա մտաւ սենեակ, հացթուխի ընտանիքը ընթրում էր: Տանտիրուհին շերեփը ձեռքին պատրաստւում էր սուպը լցնելու:

— Ի՞նչ էք ուզում, — հարցրեց նա:

— Երաժիշտը մեռաւ, — պատասխանեց պառաւը, — ես եկայ որ ձեզ իմաց անեմ:

Հացթուխը գդալը մի կողմ դրեց և սեղանից վերկացաւ:

— Մեռա՞ւ: Մի քանի ժամ առաջ նա այստեղ էր: Ի՞նչ է անելու փոքրիկ աղջիկը:

— Այո, ի՞նչ է անելու աղջիկը, — կրկնեց լւացարարը, շարժելով գլուխը: — Մեռածը աւելի լաւ օրի է, քան թէ այդ թշուառ աղջիկը, որը գլուխ դնելու տեղ չունի: Նա այժմս քնած է իմ անկողնում: Բայց ես չեմ կարող շարունակ նրան ինձ մօտ պահել, ես էլ աղքատ կիս եմ, միշտ լւացքի եմ գնում: Եթէ ես հարուստ լինէի, այդ աղջկան ինձ մօտ կը պահէի:

— Իհարկէ, դու ինչպէս ուզենաս կանես, — պատասխանեց տանտիրուհին. բերանը լիքը կերակուրով: — Օտար երեխաներին տուն բերելը մի առանձին բաւականութիւն և բախտաւորութիւն չէ. ինչո՞ւ երաժիշտը կենդանի ժամանակ հոգս չէր տանում իր աղջկայ վրա: Ամեն մի պարտաճանաչ հայր այդ բանը ամենից առաջ պէտք է հոգայ:

— Սպասի՛ր, կարելի է նա մի օրեւ գրաւոր կարգադրութիւն է թողել, — անհամբերութեամբ աւելացրեց հացթուխը:

— Թողել է, չէ թողել, ոչ իմ գործն է և ոչ քո գործն է:

Չարժէ դրա համար ընթրիքը սառեցնել: Նստիր և հացդ կեր, —ասաւ տանտիկինը:

—Ո՛չ, ես չեմ կարող ընթրել: Մահը եկել մօտեցել է մեզ: Գնանք, —ասաւ նա պառաւին, —ես վեր կը բարձրանամ և կը տեսնեմ թէ ինչ է կատարուում այնտեղ: Գուցէ հանգուցեալը գրել է թէ որտեղ պէտք է տեղաւորել աղջկան իր մահից յետոյ:

—Միթէ դու այդ բանը չես կարող անել ընթրիքից յետոյ: Մէկ էլ որ, ի՞նչ կարիք կայ խառնուես այն բանի մէջ, որը քեզ չի վերաբերում: Ամեն մարդ իր հոգսերն ունի, էլ ինչո՞ւ քիթդ կոխում ես ուրիշի գործերի մէջ, —չոր նկատեց հացթուխի կինը և չարութիւնից կարմրեց:

Բայց ամուսինը ուշք չը դարձնելով իր փնթփնթան կնոջ վրա՝ լացարարի հետ միասին դուրս եկաւ սենեակից:

Երաժիշտը ոչինչ չէր թողել, ոչ մի տող գիր ու ոչ մի կոպէկ փող: Նրա թողած ժառանգութիւնը այն երեք մարկն էր, որ մահից առաջ ստացել էր տեսչից: Իրեր էլ չը կային, որոնց վաճառումից մեռելին թաղելու փող լինէր:

—Այ կին, աշխատեցէք թաղել տալ այս աշխատաւոր մարդուն. եթէ փողի պակասութիւն լինի, ինձ իմաց արէք: Ես չեմ ուզում որ երաժիշտը թաղւի, ի՞նչպէս մի մուրացկան:

—Իսկ աղջիկը, —հարցրեց լացարարը:

—Աղջկան բերէք ինձ մօտ, մինչև որ նրա համար մի ապաստան գտնուի: Առ այժմս բարի գիշեր, —ասաւ հացթուխն ու գնաց:

Լացարար կինը սանդուխտի գլխից լոյս արեց և ետևից կոչեց.

—Աստծու օրհնութիւնը ձեր վրա լինի: Դուք բարի մարդ էք:

Միւս օրը առաւօտեան կանուխ հանգուցեալի դիակը դուրս բերին տնից և տարան եկեղեցի, ապա գերեզմանատուն: Լուռ, առանց երգի և զանգահարութեան, առանց ծաղիկների և պսակների հեռացաւ խեղճ երաժիշտը իր մշտական բնակարանը:

Մինիօնը գիշերը շատ լաւ քնեց: Բնութիւնն իրենն արել էր: Այնպիսի սաստիկ ցնցումներից յետոյ նա կազդուրեց թշուառ որբին մի քաղցր քնով:

Բայց երբոր աղջիկը զարթնեց, ամենից առաջ հարցրեց թէ ո՞ւր է հայրիկը:

—Քո հայրիկին հրեշտակները տարան երկինք, դու էլ չես կարող գնալ նրա մօտ, —հանգստացնում էր նրան լացարար կինը. —Նա հիմա քո մայրիկի հետ երկնքում է:

—Ինձ էլ շուտով կը տանեն երկինք: Հրեշտակները շուտով կը գան իմ ետևից: Ես հիմա եմ ուզում գնամ հայրիկիս մօտ, տա՛ր ինձ նրա մօտ:

—Այո, այո, նրանք կը գան քեզ էլ կը տանեն, —մխիթարում էր նրան բարի պառաւը. —հիմա վեր կաց, սուրճ խմիր, յետոյ կը հաւաքենք քո իրերը: Հացթուխը ուզում է քեզ վերցնել իրեն մօտ: Դու ամեն օր կուշտ կուտես, տաք սենեակ կունենաս և չես իմանայ՝ ի՞նչ է կարիքը:

Սուրճ խմելուց յետոյ պառաւը աղջկան տարաւ իրենց սենեակը:

Այնտեղ ամեն բան փոխւած էր այդ կարճ ժամանակամիջոցում, ամեն ինչ տակն ու վրա էր եղել: Երկու մարդ մի կնոջ հետ կուռում էին տան իրերի համար: Կօշկակարը, դերձակը և մսագործի կինը, լսելով երաժշտի մահը, եկել էին մի բան պրծեցնելու պարտքի տեղ:

Դերձակը վերցրեց ջութակն ու ասաւ.

—Սա ինձ կը հասնի, իմ որդին վաղուց է ջութակ է ուզում:

Մինիօնը բարձր լաց եղաւ և ձեռքերը մեկնեց դէպի ջութակը:

—Տո՛ւր ինձ իմ ջութակը, խնդրում եմ, — աղաչում էր աղջիկը արցունքն աչքերին:

—Լաւ, քեզ լինի այդ անպէտք բանը, —կարեկցութիւնից ձմլեց դերձակի սիրտը:

Մինիօնը խլեց իր սիրելի գործիքը և պինդ սեղմեց իր կրծքին. —էլ ուրիշ բան նրան պէտք չէր:

— Խեղճ երեխայ, սրանք ամեն բան տարան, թալանեցին քո հօր տունը, — ասաւ լւացարար կինը, — գնանք հացթուխի մօտ:

IV.

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ՀԱՅԹՈՒԽԻ ՏԱՆԸ

Աղջկայ ձեռքից բռնած, լւացարարը դուրս եկաւ դատարկ բնակարանից և գնաց հացթուխի մօտ: Նրանք մտան խոհանոցը: Պառաւր ռզում էր խօսել Քրիստինէի հետ, որ երկար տարիներ ծառայում էր հացթուխի ընտանիքում:

— Բարի լոյս, Քրիստինէ, աղջկան բերի ձեզ մօտ:

— Այդ իմ բանը չէ, — փնթփնթաց նա և սկսեց իր գործն անել:

— Պարոնը հրամայեց, որ որբին բերեմ: Ընչու էք այդպէս բարկացած. խնդրեմ մանկանը տանէք իր սենեակը:

— Ես իսկի էլ չեմ բարկանում, բայց չեմ էլ ուրախանում, որ տան մէջ կուածաղիկ է գալու: Այսօր առաւօտեան կարգին աղմուկ, խայտառակութիւն բացւեց. պարոնը ռզում է որ աղջկան ընդունէ, բայց կինը չի ռզում: Աղքատութիւնը վատ բան է, ես և դու այդ բանը լաւ գիտենք, բայց աղքատութիւնը պակասութիւն չէ: Դուք ինքներդ տարէք աղջկան պարոնի տուն: Եթէ պարոնը ասել է, անշուշտ իր խօսքը կը կատարի:

Քրիստինէն ներս թողեց լւացարարին և աղջկան, իսկ ինքը մնաց դռան մօտ կանգնած:

— Մայրիկ, ահա, նա, երաժշտի աղջիկը, — բացականչեց Բրունօն, որ պատրաստուում էր եկեղեցի գնալու և կանգնել էր դռան մօտ աղօթագիրքը ձեռքին. նա մնացել էր, որ տեսնի, ով կը յաղթէ, հայրը թէ մայրը:

— Ի՞նչ ես ռզում, — հարցրեց նա մօտենալով Մինիօնին, որը վախից կպել էր լւացարարին, — կորի ալիքից, ինչո՞ւ ես եկել:

— Պոռնուր պարոն, — ասաւ լւացարար կինը, — այդ քո

ծնողների բանն է, ինչո՞ւ ես այդպէս սրտակտուր խօսքեր ասում, դեռ աղօթատետրն էլ ձեռքիդ է, ժամ ես ղնում:

Հացթուխի կինը անդից վերկացաւ. մինչև հիմա նա այնպէս էր ձեացնում թէ դէպի լուսամուտն է նայում: Այն ինչ լսում էր լւացարարի և իր որդու խօսակցութիւնը: Որդու խօսքերը իր սրտով էին:

— Դուք խնդրեմ իմ որդուն բան չը սովորեցնէք, — ասաւ նա, խիստ նայելով պառակի վրա: — Դուք չէք հասկանում, որ նա ճիշտ է ասում: Մենք չենք կարող որբեր պահել: Որբանոց տարէք, այնտեղ է նրա տեղը:

— Գնանք, — շշնջաց խեղճ աղջիկը լւացարարին, — այդ չար կինը ինձ կըսպանի:

Սեղանի շուրջը նստել էին նրա երկու փոքրիկ որդիքը, Աւգուստը 12 տարեկան և Կուրտը 10 տարեկան: Նրանք բերանները բացած նայում էին աղջկայ վրա:

— Նա ջութակ է ածում, — շշնջաց եղբօր ականջին փոքրիկ Կուրտը:

— Աղջիկը ջութակ ածի, — Կուրտը չը կարողացաւ ծիծաղը պահի, այն աստիճան այդ բանը նրան ծիծաղաշարժ էր երևում:

Աւգուստը ոչինչ չը պատասխանեց. նա վախվիւնով և կարեկցաբար աչքերը մէկ մօր, մէկ էլ Մինիօնի վրա էր դարձնում:

Բարի լւացարար կինը երբէք իր կեանքում այդպիսի անգուլթ սիրտ չէր տեսել: Առհասարակ նա լացկան չէր, բայց այստեղ նրա աչքերին արցունքներ երևացին: Նա ձեռքը դրաւ աղջկայ գլխին և դողդոջուն ձայնով ասաւ.

— Լաւ, սա ձեզ համար ծանրութիւն չի լինի, ես ինքս հոգս կը տանեմ այս որբի վրա: Ես հարուստ մարդկանց լացքն եմ անում, հէնց այսօր կանցնեմ նրանց մօտ և կը խնդրեմ որ մի բան անեն այս որբի համար: Իսկ առայժմ սրան կը տանեմ իմ աղջկայ մօտ: Ծիշտ է, նա աղքատութեան մէջ է չորս երեխաներով, բայց նա որ իմանայ թէ

այս աղջիկը բոլորովին դռանն է մնացել, սրան կը կերակրի իր սեղանից. ես լաւ եմ ճանաչում նրա բարի սիրտը:

—Հէնց դրանից էլ պէտք է սկսէիր, էլ ինչո՞ւ էր պէտք այս կառակերգութիւնը: Դուքսը մնացած անտէր ու անանուն երեխաներին փոխանակ կարգին մարդկանց մօտ բերելու, պէտք է տանէիք որբերի ապաստարան: Դուք այդքանը պէտք է հասկանայիք:

Մինիօնը ինքն էլ չէր հասկանում թէ ինչու, բայց այդ կիներ նրան վախ ու սարսափ էր ազդում: Նա մինչև անգամ նրա խօսքերի նշանակութիւնը չէր հասկանում, որովհետեւ երբեք այդպիսի բան չէր լսել: Ա՛խ, երանի թէ հայրիկը այս խօսքերը կարողանար լսել: Նա, որ միշտ իրեն հետ խօսում էր այնպէս քաղցր, այնպէս քնքո՛ւշ: Աղջիկը այնպէս էր տարւել իր մտքերով, որ չը նկատեց թէ ինչպէս իրեն մօտեցաւ Աւգուստը:

—Մի՛ լաց լինի,—մօտենալով նրան, ձեռքից բռնելով ասաւ Աւգուստը,—մենք քեզ չենք վիրաւորի: Մայրիկ, թող աս մեզ մօտ մնայ,—խնդրեց նա մօրը:

—Լռի՛ր, յիմար տղայ,—դարձաւ դէպի նրան մեծ եղբայրը Բրունօն:—Դու կարծում ես թէ բան չարժէ: Ծիշտ որ, մայրիկ, հօ դրա վրա մեր փողը ծախսելու չէ՞նք: Կորի՛ այստեղից, ի՞նչ ես կանգնել:

Նա ուզում էր աղջկան դուրս շարտել դռնից, բայց յանկարծ հօր ծանր ձեռքը բռնեց նրա վզակովից:

—Ամաչի՛ր, մի՛թէ դու չես խղճում այս մանկան: Դու ժամ ես գնում և այդպիսի անխիղճ խօսքեր ես ասում: Կորի՛ այստեղից, խնդրի՛ր Աստծուն, որ քեզ խիղճ տայ:

Ասաւ ու դուրս հրեց դռնից:

—Սպասի՛ր դու, մուրացկան,—փնթփնթաց Բրունօն փողոցում, բռնեց քնքերը սեղմած,—դու այդ չես մարսի, տեղը կը հանեմ:

—Իսկ դու, այ կնիկ, կարգադրի՛ր, որտեղ պէտք է գիշերը քնի աղջիկը: Նա կը մնայ մեզ մօտ, դա իմ վերջին խօսքն է:

—Ուրեմն ընդմիջտ,—ճշաց տանտիկինը և այնպէս արագ վեր թռաւ աթոռի վրայից, որ շուռ տւեց նրան:—Մի ժամ առաջ դու ասում էիր որ մեզ մօտ կը մնայ, մինչև նրա համար մէկ ապաստան ճարւի, իսկ հիմա ուզում ես ընդմիջտ մեզ մօտ մնայ: Տեսնում եմ, որ այս տան մէջ գէրօ եմ դու հրամայում ես, ես պէտք է կատարեմ: Քեզ համար միկնոյն է որ մենք կտրում ենք մեր երեխաների բերանից: Դու կարծում ես թէ աղջկայ պահելը ոչինչ չի նստի: Իսկ դպրոցի թոշակը, հագցնել-կապցնելը, պահելը, դու կարծում ես այդ ամենը երկնքից կը թափւի:

—Այդ մասին մի հոգայ, այդ իմ գործն է: Հացի համար ես ասում, մենք հաց ունենք, մնացածը ես կը հոգամ: Մօտեցի՛ր ինձ,—դարձաւ նա և բռնեց աղջկայ թևից—Դու կը մնաս մեզ մօտ, իսկ դուք, փոքրիկներ, լաւ վարւեցէ՛ք սրա հետ: Սա ոչ հայր ունի և ոչ մայր. չը մոռանաք այդ բանը:

Կայծակի արագութեամբ Աւգուստը տեղից թռաւ և աթոռը դրեց իր աթոռի մօտ:

—Նստի՛ր այս աթոռին: Նայի՛ր, հայրիկ, ինչպէս փոքր է դեռ, սեղանից բարձր չէ: Խնձանից ցածր է:

Հայրը շոյեց նրա մազերը և քնքշօրէն շարժեց գլուխը: Կիներ լռել էր ու գուլպա էր գործում: Երբ որ ամուսինը դուրս գնաց սենեակից, նա իր ամբողջ բարկութիւնը թափեց լացարարի գլխին:

—Այս ամենը ձեր սարքածն է. իսկ նեղութիւն քաշողը ես պէտք է լինեմ:

Լացարարը կանգնել էր ու չէր կարողանում վճռել—աղջկան թողնի թէ՛ տանի: Բայց թէ ո՛ր տանի որբին: Ծար չը կար, բարի կիներ աղջկան թողեց հացթուխի տանը և ծանր սրտով դուրս գնաց սենեակից:

Դուռնատ և երկշոտ նստել էր Մինիօնը ջուրակը ձեռքերի մէջ, օտար մարդկանց շրջանում, կարմրաթուշիկ Աւգուստի մօտ:

—Ուզո՞ւմ ես այս պատկերը ընծայեմ քեզ,—ասում էր Աւգուստը, մօտեցնելով գոյնզգոյն պատկերը:



1746-2007

Աղջիկը չը վերցրեց պատկերը և վախեցած նայում էր դէպի դուռը, որտեղից դուրս էր գնացել լացարարը, և մեծ յոյս ունէր թէ նա կը վերադառնայ:

Բայց լացարարը չէր վերադառնում, Մինիօնը դառնապէս լաց եղաւ:

— Բաց թող ինձ, — խնդրում էր նա Աւգուստին, — ես այստեղ չեմ ուզում մնալ:

— Ոչ, չի կարելի, դու կը մնաս մեզ մօտ, — հանգստացնում էր տղան արտասուող աղջկան, — մենք իրար հետ կը խաղանք: Ուզում ես ցոյց տամ գրքի պատկերները, այո՞:

— Դասերդ պատրաստիր և հանգիստ թող դրան, — բղաւեց նրա վրա մայրը:

— Ինձ մօտ արի, աղջիկ, — յանկարծ կանչեց հացթուխի կիսը Մինիօնին, — ինչ է անուկդ:

Մինիօնը տեղից չը շարժեց և չը պատասխանեց:

— Դրա անունը Մինիօն է, — շտապով պատասխանեց Աւ-

գուստը:

— Քեզ հարցնող չը կայ, ինքը լեզու չունի: Այ աղջիկ, պէտք է պատասխանես թէ ոչ:

— Մինիօն, — շշնջաց վերջապէս փոքրիկը:

— Ի՞նչ, անուկդ Մինիօն է, — ասաւ ու ծաղրելով բարձր հռնաց: — Սրան մի տես, չէն անուն աւեր քաղաքներին: Լաւ չէր այդ փառաւոր անւան տեղ քո հայրը փող թողած լինէր: Մեզ մօտ քո անունը կը լինի Մինիօ: Քեզպէս քաղցածին այդպիսի անուն չի սազի: Ի՞նչ ես գում, — յանկարծ բղաւեց նա, վեր թռչելով տեղից և յատակին շարժելով ձեռքի գուլպան, որի կծիկը գլորւեց սենեակի մէջ: — Զոռցովդ ինձ կատաղեցնում ես: Եթէ ձայնդ չը կտրես, ես քեզ ցոյց կը տամ:

Նրա խօսակցութիւնը ընդհատեցին մի ինչ որ օտարոտի, սարսափելի ձայներ: Կուրտը վաղուց աչք էր գցել ջութակին, վերջապէս խեց նրան աղջկայ ձեռքից և սկսեց ճակճրնկացնել: Մինիօնը վեր թռաւ տեղից և սկսեց Կուրտի ձեռքից ջութակը քաշել:

— Այդ իմ ջութակն է, հայրիկս է ինձ ընծայել, — բղաւում էր նա իրեն մոռացած: Դու չը պէտք է նւագես, տուր ինձ:



Կուրտին ծիծաղեցնում էր նրա բարկութիւնը. նրան չարացելու համար ջութակը գլխից վեր էր բռնել: «Թէ կարող ես հասիր, Մինիօ», ասում էր նա: Բայց քանի աղջիկը ձեռքերը մեկնում էր գործիքին, այնքան տղան ջութակը աւելի վեր էր բարձրացնում: Վերջապէս մէջ խառնեց Աւգուստը և բռնեց եղբօր ձեռքից, — երեխաները իրար կպան, մայրը բաժանեց նրանց իրարից և նրանց ձեռքից ջութակը խեց:

— Դու ի՞նչ իրաւունքով օտարի տան մէջ կուի ես ձրգում, — բղաւում էր նա: — Դու անկիրթ աղջիկ, գնա անկիւն: Մինչև որ ժամը 12-ը չը խփի, չը հեռանաս այնտեղից: Դուք, երեխէք, ձեր դասերը սովորեցէք, իսկ ով-որ սրա հետ խօսի, առանց ճաշի կը թողնեմ:

Աւգուստը ծածուկ նայում էր ժամացոյցին և հաշւում էր, որ մինչև 12-ը դեռ կէս ժամ էլ կայ:

Երբէք Մինիօնը իրեն այնպէս անբախտ չէր զգացել: Սիրտը պատռում էր վշտից: Անկիւնում կանգնած տեղը իրեն համար կրկնում էր. «Թանկագին հայրիկ, արբի ինձ տար: Սրանք խլեցին իմ ջուլթակը»:

Ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով աղջկայ վրա՝ հացթուխի կիներ բանալիների կապոցը և ջուլթակը առած՝ սենեակից դուրս եկաւ: Նա բարձրացաւ կտուրը, բաց արաւ մեծ արկղը, պահեց նրա մէջ ջուլթակը, Մինիօնի վերջին մխիթարութիւնը:

Սանդուխտների գլխին նա կանգ առաւ և բաց արաւ փոքրիկ դռնակը, որը տանում էր դէպի մի մութ խուց: Այդտեղ զանազան անպէտք իրեր կային. — ջարթւած աթոռներ, կոտրած հայելու շրջանակ, ծաղկի անպէտք անօթներ: Հացթուխի կիներ անօթները մի կողմ քշեց, ման եկաւ գտաւ հին երկաթէ մահճակալը, որը փոշոտել և բորբոսնել էր, կողովի միջից հանեց բարակ վերմակը և զցեց խոտէ ներքնակի վրա: Բարձն ու տաք վերմակը աւելորդ դարդարանք համարեց: «Աղքատներին հարկաւոր չէ երես տալ: Աղջիկը, չը պէտք է մոռանայ, որ ինքը ոչինչ չունի, նա էնքան պէտք է աշխատի, մինչև որ ձեռքերը աշխատանքից ցաւեն»: Նա դուրս եկաւ խուցից և իջաւ խոհանոցը:

— Քրիստինէ, աղջկայ շորերը տար վերնատուն, նա այնտեղ կը տեղաւորւի: Աւելը աուր, թող նա դեռ մաքրէ: Դու կը հսկես նրա վրա:

Քրիստինէն լուռ էր, բայց տխուր շարժում էր գլուխը:

V.

Ք Ր Ի Ս Տ Ի Ն Է Ն

Խփեց ժամը 12-ը: Երեխաները հաւաքեցին սեղանի վրայից իրենց գրքերը, այնպէս որ ժամացոյցի վերջին զնգոցի հետ Քրիստինէն ներս մտաւ սեղան բանալով:

— Մայրիկ, կէս ժամն անցաւ, Մինիօնը կարող է գալ անկիւնից, — բացականչեց Աւգուստը:

— Նրա անունը, իմացի՛ր, Մինօ է, — ուղղեց մայրը որդուն և դարձաւ դէպի աղջիկը. — գնա խոհանոց, քո տեղն այստեղ չէ. դու սենեակ կը գաս, երբոր քեզ կանչեն. դու մեր հասարակութեանը չես պատկանում:

— Ոչ, — տէր կանգնեց հացթուխը, — ես համաձայն չեմ դրան: Մենք ընդունեցինք երեխին մեր ընտանիքի մէջ և նա մեզ հետ միասին պէտք է սեղան նստի:

Քրիստինէն Մինիօնի համար էլ աման բերեց և դրեց Բրունօի և Աւգուստի ամանների մէջտեղը:

— Այ այստեղ էլ կընստես, — ասաւ հացթուխը աղջկան, — սա կը լինի քո մշտական տեղը:

— Ժամը ժամին չի բռնում: Էնտեղն ենք հասել, որ մուրացկաններն էլ աղաների հետ սեղան են նստում:

— Կեր, — շշնջաց Մինիօնին Աւգուստը, տեսնելով որ աղջիկը ձեռք չի մեկնում դէպի սուպը. աղջիկը չէր ուտում:

Ճաշից յետոյ Քրիստինէն տարաւ աղջկան վերնատուն, որ նա կարգի բերէ նրան: Աւգուստը շատ էր ուզում Մինիօնի հետ գնալ, բայց վախենում էր մօր պատժից: Բրունօն ծաղրելով ձայն տուեց Մինիօնի ետևից.

— Այնտեղ քեզ մկները կուտեն:

Մինիօնը մտաւ վերնատունը և չէր իմանում թէ ինչ պէտք է անէր:

— Աւէ, յետոյ ես կը գամ քեզ մօտ, — ասաւ նրան Քրիստինէն:

Աղջիկը վերցրեց մեծ աւելը, փորձեց աւելի, բայց չը կարողացաւ, աւելը իրենից մեծ էր: Տեսաւ որ չի լինի, նըստեց ու լաց եղաւ:

Յայտնի չէ քիչ լաց եղաւ թէ շատ, բունը տարաւ ու քնեց: Քրիստինէն երեկոյեան դէմ եկաւ և նրան քնած գրտաւ: Զարթեցրեց քնած աղջկան, տարաւ իր հետ խոհանոց, նստեցրեց վառարանի մօտ և ասաւ. «Մինուշ, տաքացի՛ր, այ

քեզ սուրճ և սպիտակ հաց, կեր և խմիր, քաղցած կը լինես»:

Բարի ձայնը և քաղցը վերաբերմունքը աղջկայ սիրտը գրաւեցին: Քրիստինէն ուրախացաւ, տեսնելով թէ ինչ բաւականութեամբ աղջիկը սուրճ էր խմում:

Ընթրիքի ժամանակ աղջկան տարան սենեակ, բայց նա էլի ոչինչ չէր ուտում. նա վախենում էր տանտիկնոջից և Բրունօից, այնպէս էր վախում, որ տեղից չէր շարժուի: Մինչև անգամ Աւգուստի քաղցը խօսքերը չէին խրախուսում նրան:

—Հիմա, Մինօ, գնա և պառկիր,—ասաւ նրան հացթուխի կինը ընթրիքից յետոյ,—վաղը առաւօտեան ժամը 6-ին վեր կը կենաս և Քրիստինէին կօգնես կօշիկները սրբելու: Ծոյլը մեզ պէտք չէ: Մոմ չը վառես, մութ տեղը քնիր:

—Հիմա քեզ միները անշուշտ կուտեն,—չարացնում էր նրան Բրունօն. հայրը տանը չէր, նա համարձակ ծիծաղում էր խեղճ որբի վրա:—Գիտես, այնտեղ մեծ-մեծ սարդեր կան, նրանք քո քիթն ու բերանը կը մտնեն... հա, հա, հա, խաւում ջութակահար, հրաշալի բնակարան ունես:

Յղբօր այդ խօսքերի վրա Աւգուստը սարսափեց:

—Մայրիկ, թող Քրիստինէն նրան լամպով տանի, գոնէ միայն այսօր, մայրիկ, սանդուխտների վրա մութն է:

—Լո՛ւր, նա մենակ էլ կը գնայ: Դրա համար ծառան էր պակաս:

Մինիօնը մենակ ուղևորւեց իր բնակարանը: Վախից դողալով նա կանգնել էր մութ սանդուխտների վրա, մին էլ տեսաւ որ Քրիստինէն իր մօտ է: Լուռ ու մունջ նա բռնեց աղջկայ ձեռքը և սանդուխտներով վեր տարաւ, բայց վերնատուն չը տարաւ, այլ վեր բարձրացաւ մինչև երկրորդ յարկը, դուռը բաց արաւ և երբոր նա ուզում էր լամպը վառել, աղջիկը զարմացած նայեց շուրջը: Փոխանակ այն զարհուրելի խցիկի, իրեն տեսաւ մի փոքրիկ կոկիլի սենեակում: Սմէն ինչ իր տեղն էր և մաքուր: Պատի մօտ դրած էին անկողինը, պահարանը, որի վրա կային լուսանկար պատկերներ:

Վառարանի մօտ տեղաւորւած էին երկու սեղան և մի աթոռ, իսկ պատի մօտ Մինիօնի մահճակալը:

Ի՞նչ բարի հրեշտակ էր, կը հարցնէք դուք, բերել վերնատից մահճակալը: Քրիստինէն էր: Երբոր բոլորը ընթրիքի էին նստել, նա մահճակալը բերել էր իր սենեակը:

—Երեսնան չի կարող մենակ քնել մութ սենեակում: Նա սրտաճաք կը լինի, երբ որ մկները կը սկսեն իրենց արշաւանքը,—ասաւ նա լացարար կնոջը, որն երեկոյեան դէմ եկել էր և բերել Մինիօնի համար հագնելու շորեր և սպիտակեղէն: Բոլոր այդ շորերը նա ուզել էր իր ծանօթ տիկիններին:

—Ես աղջկան կը վերցնեմ ինձ մօտ, իմ սենեակս,—ասաւ Քրիստինէն լացարարին:

—Իսկ եթէ տանտիկինդ իմանայ, այն ժամանակն ի՞նչ կանես:

—Նա չի իմանայ, նա շատ սակաւ է գալիս այստեղ: Ե, որ իմանայ էլ, ի՞նչ պէտք է անի: Մարդ պէտք է բանը խղճով բռնի, ինչպէս որ Աստուած է հրամայում:

Քրիստինէն հանեցրեց Մինիօնին և դրեց անկողնի մէջ, որը իսկի նման չէր այն տեղաշորին, որը պատրաստել էր հացթուխի կինը առաւօտեան:

Ներքնակի վրա փռած էին սպիտակ-փրփուր սաւանը և տաք վերմակը: Գլխատակը դրած էր փափուկ բմբուլէ բարձը:


Այդ անկողինը Քրիստինէն ժառանգութիւն էր ստացել իր մօրից, բայց չէր բանեցրել, որովհետեւ ում մօտ ծառայել էր, տեղաշոր էլ ստացել էր: Այսօր նա բաց արեց իր սնդուկը, որտեղ պահում էր իր ժառանգութիւնը և հանեց նրան:

—Է, հիմա, Մինուշ, աղօթիր, գիտեմ դու աղօթել կիմանաս:

Աղջիկը ձեռքերը ջլատեց և սկսեց աղօթել: Աղօթքի վերջը նա աւելացրեց.

—Աստուած, ուղարկիր հայրիկիս ինձ մօտ, վերադարձրու ինձ իմ ջութակը... Ամէն:

—Հանգիստ քնիր, իմ փոքրիկս, բարի գիշեր,—քնքշօրէն



ասաւ Քրիստինէն:—Շուտով ես էլ այն միւս մահճակալի վրա կը քնեմ: Միայն թէ, տես, ոչոքի չասես թէ դու այստեղ ես քնում, մինչև անգամ Աւգուստին չասես, իմացար:

Նա խնամքով ծածկեց աղջկան ու ինքը իջաւ խոհանոց: Նա միշտ լուռ էր, դէմքը տխուր. եկաւ ու իր գործոքն զբաղեց: Ոչ ոք չէր հաւատայ, որ նա հէնց հիմա մի բարի գործ կատարեց:

VI.

ԾԱՆՐ ԿԵԱՆՔ

Անցաւ երկու շաբաթ: Մէկը մէկի ետեից եկան տխուր և անմխիթար օրեր: Տխուր էր ապրում Մինիօնը հացթուխի տանը: Տանտիկինը վատ էր վարւում նրա հետ: Բրնունօ

չարացնում էր նրան, իսկ Կուրտը ծաղրում էր, և թշուառ աղջիկը մշտական վախից դողում էր: Ինքը հացթուխը նրա մասին չէր հոգում: Նա թէև բարի մարդ էր, բայց միշտ զբաղւած: Նա աղջկան բերեց իր տունը, ուսման վարձը վճարեց և հաշւեց ու իր պարտքը կատարել է, մնացածը թողեց իր կնոջը:

Շուտով Մինիօնը սովորեց թագցնել իր արցունքները, որոնց այնքան չէր սիրում տանտիկինը, բայց դրա փոխարէն քանի գնաց նա աւելի երկչոտ դարձաւ: Միայն Աւգուստին էր որ նրա հետ լաւ և քաղցր էր վարւում: Բարի տղան մօրից ծածուկ իր բերանի համեղ պատառը բաժանում էր որբի հետ, թէև մայրը աշալուրջ հետևում էր, որ իր երեխաները բարեկամութիւն չանեն այդ մուրացկանի հետ:

Երբեմն տօն օրերին, երբոր մայրը ճաշից յետոյ քնում էր, Աւգուստը գնում էր խոհանոց և երեխաները սկսում էին երաժիշտ-երաժիշտ խաղալ:

Մինիօնը վերցնում էր խոհանոցի տախտակը և մի որևէ փայտ, այնպէս էր ձևացնում թէ ջութակ է նւագում, իսկ Աւգուստը ֆլէյտա: Այդ միջոցին նրանց դէմքերը այնպէս լուրջ էին, կարծես իսկական ներկայացում տալիս լինէին: Մինիօնը մտախօհ հայեացքը ուղղում էր հեռուն, և իր հոգու մէջ մտաբերում էր այն պիէսները, որ սովորել էր իր հօրից:

—Այժմ ես նւագում եմ պրելիւդիա,—ասում էր նա Աւգուստին:—Լսում ես, հիմա էլ սերենադ: Շատ դժւար կտոր է, բայց շատ էլ գեղեցիկ է, այնպէս չէ:

Աւգուստը համաձայնում էր և գեղեցիկ էր գտնում այն ամենը, ինչ որ նւագում էր իր ընկերուհին տախտակի վրա:

—Ախ, Աւգուստ, մէկ էլ իմ ջութակը ինձ տային,—ասում էր խեղճ աղջիկը,—դու գիտես, որտեղ է պահել մայրիկդ: Եթէ ջութակս ինձ տաս, ես քեզ համար ինչ գիտեմ կը նւագեմ:

Ինչ սիրով կը կատարէր Աւգուստը նրա խնդիրը, եթէ

միայն ջուլթակի տեղն իմանար: Նա ամեն տեղ որոնում էր ջուլթակը, բայց իզուր: Նա չէր նկատում այն արկղը, որ դրած էր մի մուկ անկիւնում և որի մէջ ընկած էր ջուլթակը: Միակ լուսաւոր ճառագայթը աղջկայ համար Քրիստինէն էր, որի հետ այնպէս կապել էր: Քրիստինէն աղջկան սովորեցրել էր գուլպա գործելը, կար անելը: Մինիօնը սիրով ընդունում էր նրա խորհուրդները, կարում-կարկատում էր իր շորերը: Սկզբում նրա փոքրիկ մատները չէին հպատակում, բայց նա հետզհետէ կարգ ու կանոնի սովորեց:

Մի կիրակի օր ճաշից յետոյ Մինիօնը խոհանոցում սրբում էր դանակները: Յանկարծ խոհանոցի դուռը բացւեց և ներս մտան տանտիկինն ու Բրունօն:

— Դու այստեղ ի՞նչ ես անում, ծոյլ, — բղաւեց տանտիկինը: — Մենք չենք կարող քեզ իշխանուհու նման կրթել. ժամանակ է որ դու քեզ համար մի կտոր հաց աշխատես: Վաղը դու կերթաս Բողդանի հետ (հաց ծախող ծառան) հաց անէ տուն տանելու: Առաջին օրը նա քեզ ցոյց կը տայ թէ հացերն ինչ տեղ պէտք է տանես:

— Նա առաւօտեան դպրոց է գնալու, — նկատեց Քրիստինէն:

— Ես այդ շատ լաւ գիտեմ, միթէ նա չի կարող շուտ վեր կենալ: Ժամը 6-ին թող դուրս գայ տանից, մինչև 8-ը հացերը ցրի, յետոյ գնայ դպրոց: Դու ինչո՞ւ աչքերդ ինձ վրա չռեցիր: Միթէ իմ ասածը չը հասկացար:

Բրունօն, որ մօր հետ միասին մտածել էին այդ նոր պատիժը, ծամածռութիւններ էր անում:

— Օյ, օյ, օյ..., — ասում էր նա, լեզու ցոյց տալով, — դու նման ես մեր կատուին, որ ուզում է ցատկել ու ճանգոբել: Ի՞նչ է, չըլինի թէ դու էլ ես ուզում ճանգոբել: Ես քեզ ցոյց կը տամ ճանգոբել, խանում ջուլթակահար:

Բրունօն մօտեցաւ թշառ աղջկան և այնպէս քաշեց նրա մազերից, որ նա ցաւից աղաղակեց:

— Լսիր, անպիտան աղջիկ. ինձ ջղայնացնում է քո ճշոցը, — ասաւ ու մի ծանրաքաշ ապտակ իջեցրեց անմեղ աղջկան:

— Ի՞նչու համար մազերիդ հիւսերը երեսիդ մէջ են առել: Քեզ պէս աղքատ աղջկայ համար այդ ձևը բոլորովին անյարմար է: Բրունօ, մկրատը բեր:

Բրունօն երկու անգամ կրկնել չը տւեց խօսքը, իսկոյն չքացաւ խոհանոցից և վերադարձաւ անագին մկրատը ձեռքին:

— Ջրիկ, չըիկ, չըիկ, յատակին թափւեցին հրաշալի հիւսերը, հանգուցեալ հօր ուրախութիւնն ու հպարտութիւնը: Մի րոպէից յետոյ Մինիօնի գլուխը խուզւած տղայի գլուխ դարձաւ:

— Այ հիմա խուզած կատու դարձար, քաշալը գնաց տանձի, վախենամ գլուխը խանձի, — կատակում էր Բրունօն, — հա, հա, հա, հա, ինչի՞ նման է: Այ թէ դպրոցում քեզ վրա կը ծիծաղեն, հա:

— Աւիր մազերդ, Մինօ, այնպէս որ ոչ մի մազ չը տեսնեմ յատակին: Հաւաքիր ու ածա վառարանը, վառիր:

Այսպիսի հերոսական գործից յետոյ մայրն ու որդին խոհանոցից դուրս եկան:

Գունատ, վախեցած Մինիօնը վերցրեց աւելը և սկսեց աւելի իր մազերը: Նա ուզում էր հաւաքած մազերը կրակն ածել, որ Քրիստինէն ձեռքը բռնեց:

— Թող, — ասաւ նա դողդոջուն ու այլայլւած ձայնով, — մի վառիր մազերդ. ես նրանց կը պահեմ: Գուցէ մի օր այդ անսիրտ կնոջ ցոյց տաս քո մազերը և յիշեցնես նրան թէ ինչպէս վատ է վարւել քեզ հետ: Ով գիտէ, ինչ կարող է պատահել, աշխարհ է:

Քրիստինէն վերցրեց մի մեծ թերթ սպիտակ թուղթ և խնամքով նրա մէջ գրեց աղջկայ հիւսերը, փաթաթեց, ծրարը թելով կապեց և մատիտով վրան գրեց.

«Մինուշի հիւսերը: Կտրեց հացթուխի կինը Ֆրանկֆուրտում դեկտեմբերի 2-ին 18... թւին»:

Նա պահեց ծրարը գրպանում, որ ոչ ոք չը տեսնի նրան:

Մինուշը կալա Քրիստինէին, իսկ նա էլ սեղմեց աղջկան իր կրծքին, պինդ համբուրելով նրան:

—Մի վշտանայ, Մինուշ, բո ծամերը աւելի լաւ կը գան: Այն ժամանակ ես մազերիդ համար ցանց կառնեմ և մենք նրանց կը թազցնենք ցանցի մէջ: Իսկ այսօր երեկոյեան ես վառարանը կը վառեմ և շոկոլադ կը պատրաստեմ:

Այդ ձևով էր Քրիստինէն աշխատում միխթարել անբախտ որբին:



VII

Ծ Ն Ո Ւ Ն Դ Ը

Առաւօտեան վաղ, վաղ, երբ դեռ հացթուխի կինը և երեխաները քաղցր քնած էին լինում, տաք վերմակների տակ, Մինիօնը արդէն դրսուժեց էր: Հացով լի կողովը առած տնէտուն հաց էր տանում: Առաջին օրը նրան ուղեկցեց Բողդանը, յետոյ ինքը պէտք է վազվզէր մուկ փողոցներով, շտապէր, որ դպրոցից ետ չընկնէր: Քրիստինէն խղճում էր խեղճ աղջկան և որքան կարող էր թեթևացնում էր նրա դռը վիճակը: Տանից դուրս գալիս Քրիստինէն նրան տաք սուրճ էր տալիս, փաթաթում էր նրա գլուխը իր մեծ թաշկինակով, հագցնում էր նրան իր ձեռքով գործած ձեռնոցները և այնպէս էր ուղարկում երեխային:

Ձը նայելով դրան ցուրտը թափանցում էր նրա շորերի միջից և դողացնել էր տալիս նրան: Խեղճուկը մրսեցրել էր իր ձեռներն ու ոտները, որոնք այնպէս սաստիկ ցաւում էին, կօշիկներն էլ սեղմում էին ոտները: Երեխան լալիս էր ոտների ցաւից: Քրիստինէն զանազան դեղեր էր անում, բայց չառողջացան նրա ոտների վէրքերը, և մի օր էլ ասաւ տանտիկնոջը այդ մասին:

—Է, արժէ այդպիսի չնչին բաների մասին խօսել: Աղջիկը պէտք է ցրտի, տաքի սովորի: Մենք չենք կարող նրան

բամբակի մէջ պահել, այն էլ է հերիք, որ կերակրում ենք,—պատասխանեց տանտիկինը:



Քրիստինէն բարկացաւ այդպիսի խստասրտութեան վրա, թէև առաջուց սպասում էր այդ բանը:

—Իսկ եթէ, տիկին, ձեր տղաների ոտները ցաւէին, դուք նրանց լոյսը չը բացւած գործի կը դնէի՞ք,—յանկարծ խօսեց Քրիստինէն:

Հացթուխի կինը այնպէս մի այլայլւած հայեացք գցեց Քրիստինէի վրա, որ նրա խօսքը բերանում մնաց:

—Ես բեզ ընդմիշտ արգելում եմ, միւս անգամ այդպիսի անպատշաճ համեմատութիւններ չանես: Միթէ դու չը գիտես, որ իմ որդիքը պատւաւոր ծնողների գաւակներ են, ապա-

գայում մի բան կունենան ուտելու և երբէք մուրացկանութեամբ ուրիշի հացը չեն ուտի:

Էլ ի՞նչ կարող էր ասել Քրիստինէն: Խեղճ աղջիկը լուռ ու մունջ դուրս եկաւ և յետոյ իր փողով մի զոյգ թաղիքէ կօշիկ գնեց Մինիօնի համար, որոնք լայն էին և չէին սեղմում վիրաւոր ոտները:

Ժամանակն անցնում էր: Եկաւ Ծնունդը, Աւգուստը մի մեծ ցուցակ գրեց, նշանակեց թէ ինչ է ուզում տօներին և Մինիօնին էլ առաջարկեց նոյնը անելու:

— Ոչ, Աւգուստ, ես հայր ու մայր չունեմ, իմ ուղածները չեմ կարող գրել: Քո մայրը ինձ ցոյց կը տայ զրա համար:

— Ես քեզ բան կը նւիրեմ, Մինիօն: — Ձը նայելով որ մայրը արգելել էր, բայց նա դարձեալ նրա նախկին անունն էր տալիս: — Ես իմ փողով քեզ համար ընծայ կ'առնեմ:

Թաթախմանը լուսաւորեցին տօնածառը:

Ձանգը հրաւիրեց երեխաներին և հիւրերին սենեակ: Մինիօնը դռնից նայում էր լուսաւորւած տօնածառին: Ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում թշուառ որբի վրա, ամեն մէկը իր ընծաներով էր զբաղւած:

— Միթէ Մինիօն համար բան չէք պատրաստած, — հարցրեց վերջապէս հացթուխն իր կնոջը:

— Ի՞նչպէս չէ, — կինը արհամարհական ձևով մատը ուղղեց դէպի սեղանը: — Դու կարծում էիր թէ նրա ընծաներն էլ մեր երեխաների ընծաների հետ կը լինեն:

Հացթուխը չէր ուզում վէճի բռնել այդպիսի հանդիսաւոր տօնին, բայց կնոջ խօսքերից չէր իմանում ինչ անէր:

Աւգուստը բերեց Մինիօնին սեղանի մօտ: Դուք հասկացէք թէ ինչ կը լինէին Մինիօնի համար ընծաները: Մի քարե-տախտակ, 4 քարեգրիչ, երկու տետրակ, երկու խնձոր, մի զոյգ կոշտ, կրունկները մեխած կօշիկ, այդպիսի կօշիկները գիւղացիներն են հագնում: Ի՞նչ տարբերութիւն սրա և միւս երեխաների ընծաների մէջ: Բրունօն ոչինչ չընծայեց աղջկան, բայց Աւգուստը իր խօսքի տէրն էր:

— Մինիօն, — ասաւ նա առանձին ցնծութեամբ, — այ քեզ իմ Ծննդեան նւերը: Ես ինքս եմ գնել: Բաց արա և տես ինչ լաւ բան է:

Բրունօն և Կուրտը հետաքրքրեցին. սրտերը վառւում էր, նրանք ուզում էին իմանալ թէ ինչ կայ կապոցի մէջ: Աւգուստը հպարտութեամբ բաց արեց ծրարը և թղթի միջից երևաց կարմիր մետաքսէ ժապաւէնը: Ժապաւէնով կապեց Մինիօնի մազերը և մի մեծ հանգոյց արաւ:

— Ի՞նչքան լաւն էս, — բացականչեց նա հիացած, — նայելով աղջկայ վրա:

Բրունօն և Կուրտը բարձր ծիծաղեցին, իսկ մայրը կոպիտ կերպով պոկեց ժապաւէնը աղջկայ գլխից:

— Այս ի՞նչ դիմակահանդէս է, — փնթփնթաց նա և ժապաւէնը շարտեց յատակին: Ի՞նչպէս ես համարձակւում, յանդուգն երեխայ, փող ծախսել այսպիսի յիմար բաների վրա:

Աւգուստը կանգնել էր, աչքերը գետին էր գցել և քիչ էր մնում լաց լինէր: Կուրտը ժապաւէնը կապել էր նրա ճակատի շուրջը, բոլորը ծիծաղում էին այդ հնարագիտութեան վրա:

— Ամաչեցէք, ինչու համար էք ծիծաղում Աւգուստի վրա, — վերջապէս միջամտեց հայրը, — ցանկացել է՝ արել է: Վեր առ, Մինիօ, քո ժապաւէնը, — քաղցրութեամբ դարձաւ նա դէպի աղջիկը, — սա քեզ է պատկանում, ինչ ուզում ես արա:


Մինիօնը ժապաւէնը վերցրեց և շարունակ իր մօտ պահեց:

Մինիօնը միայն այն ժամանակ ազատ շունչ քաշեց, երբ Քրիստինէի հետ գնաց իր սենեակը:

Բանալով սենեակի դուռը Քրիստինէն ասաւ Մինիօնին, որ նա ներս չը մտնի, մինչև որ ինքը չը կանչի: Մի քանի րոպէից յետոյ լսեց Քրիստինէի ձայնը:

— Դէհ, Մինուշ, հիմա եկ:

—Ա՛, — բացականչեց աղջիկը, ծափ տալով, — այս ինչ տօնածառ:



Սեղանի վրա կանգնած էր տօնածառը զարդարած խնձորներով և ընկոյզներով: Գոյնզգոյն մեղրամոմերը լուսաւորում էին տօնածառը իր զարդարանքներով: Հետաքրքիր բաներ էին կախւած ծառից: Մի շրջագգեստ, որ կարել էին Քրիստինէի հին շրջագգեստից, մի սև գոգնոց, մի զոյգ տաք ձեռնոցներ, մի պատկերազարդ գիրք և մի տիկնիկ: Կախած էր նաև մի մեղրահաց այս մակագրութեամբ. «Մինուշին»:

Բախտաւոր աղջիկը ընկաւ Քրիստինէի վիզը.

— Իմ սիրելի բարի Քրիստինէ, դու այնպէս բարի ես, ինչպէս իմ հայրիկը:

Քրիստինէն սեղմեց ուրբին իր կրծքին, իսկ սիրտը լցւեց ուրախութիւնով: Այդպիսի ուրախութիւն մարդ զգում է այն

ժամանակ, երբ ուրիշին լաւութիւն է անում: Ամբողջ երեկոն Մինիօնը չէր բաժանւում իր տիկնիկից: Դրել էր իր ծնկներին և խաղացնում էր: Իսկ երբոր նրա աչքերը սկսեցին քնից խփւել, վեր կացաւ մտաւ անկողին և տիկնիկն էլ իր ծոցն առաւ: Քրիստինէն սենեակը հաւաքեց և քնքշօրէն նայում էր քնած մանկան վրա: Այսօր նա ինչպիսի վարդագոյն թշեր ունի, ինչպէս անհոգ քնել է իր տիկնիկի հետ: Ժպիտը խաղում էր նրա վարդագոյն շրթունքները վրա:

VIII.

ՄԻՆԻՕՆԻ ԶՈՒԹԱԿԸ

Վերջապէս անցաւ երկար ու ձանձրալի ձմեռը, եկաւ ուրախ դարունը: Խնձորենիները և բալի ծառերը լիովին ծաղկել էին, դաշտերն ու անառնները հոտ էին բուրում: Նրեխաները խաղում էին դուրսը, գարնան առաջին ծաղիկներից իրենց գլուխներին սլաակներ էին հիւսում:

Մինիօնը էլ գիշերով վեր չէր կենում:

Հիմա, երբ նա վերջացնում էր իր առաւօտեան գործը, արեւը արդէն պայծառ փայլում էր և թռչունները ուրախ ձուռողում էին: Նրա ոտների վերքերը առողջացել էին և նա իր լայն և ծանր կօշիկներով լաւ էր ման դալիս: Նա քաղաքից դուրս չէր գնում, միայն երկու անգամ Քրիստինէի հետ գերեզմանատուն էր գնացել ծնողների շիրիմները տեսնելու:

Աւգուստը երբեմն նրա համար ծաղիկ է փունջեր էր բերում, որոնց կապում էր դաշտ ու մարգագետին գնալիս: Ինչպէս ուրախանում էր աղջիկը ծաղիկների վրա: Մի անգամ Մինիօնը կանգնած էր լուսամուտի առաջ և նայում էր ծիծեռնակներին, որոնք իջնում և բարձրանում էին դէպի ամպերը:

— Քրիստինէ, ծիծեռնակները կարող են երկինք թռչել:

—Ոչ, նրանք չեն կարող այդպէս բարձր թռչել:

—Բայց տեսնում ես, նրանք հասնում են մինչև ամպերը, այ, տես, մէկը ծածկեց ամպի մէջ, գուցէ երկինք թռուաւ: Ա՛խ, ինչ կը լինէր՝ ես ծիծեռնակ լինէի, թռչէի գնայի հայրիկիս ու մայրիկիս մօտ ու էլ հաց չը ծախէի:

—Մինիօն,—ասաւ մի անգամ Աւգուստը, գալով խոհանոց:—Ես իմ ընկերի մօտ մի հետաքրքիր այգի տեսայ, եկ, մենք էլ այդպիսի այգի շինենք բակում, արևի տակ: Ես կտրից մի արկղ կը բերեմ, հողով կը լցնենք, ծաղիկներ կը ցանենք, խնձորենի կը տնկենք, գիտես՝ խնձոր ինչպէս եմ սիրում:

Տանտիկինը Քրիստինէի հետ շուկայ էին գնացել: Երեխաները իրենց ազատ զգացին և վազեցին բարձրացան կտուրը: Այնտեղ մի յարմար արկղ չէին գտնում, մէկը մեծ էր լինում, միւսը փոքր: Նրանք ցած էին գալիս, որ ուրիշ տեղ փնտռեն իրենց ուղածը, մին էլ յանկարծ արևի շողքը ընկաւ մի արկղի վրա, որ ընկած էր մութ անկիւնում:

—Այ լաւ արկղ, սա շատ յարմար է,—բացականչեց Աւգուստը, ու երկուսով յարձակեցին արկղի վրա:

Մին էլ Մինիօնը ուրախութիւնից ճչաց:

—Աւգուստ... իմ ջութակը, իմ ջութակը:

Նա վերցրեց ջութակը և սկսեց թռչկոտել և պարել: Նա համբուրում էր, սեղմում էր կրծքին ջութակը և չէր իմանում ինչ անէր ուրախութիւնից: Աւգուստը զարմացած նայում էր իր ընկերուհուն վրա, որին երբէք այդպէս բախտաւոր և ուրախ չէր տեսել:

—Մի բան նւագիր,—խնդրում էր նա,—միայն թէ շուտով, քանի որ մայրիկը այստեղ չէ. նա չը պէտք է իմանայ, որ մենք ջութակը գտել ենք:

—Գնանք Քրիստինէի սենեակը, այնտեղ երբէք քո մայրը չի մտնում, այնտեղ կը նւագեմ:

Նրանք երկուսով կամաց կամաց, շունչները իրենց քաշած, դուռը բաց արին, մտան սենեակ և նորից փակեցին:

Մինիօնը վերցրեց կնիւնտոցը և սկսեց նւագել իր նախ-

կին մեղեդիները: Նա իր գիտեցածներից ոչինչ չէր մոռացել: Դուռ, շունչը իրեն քաշած, լսում էր Աւգուստը Մինիօնին, որ կանգնած էր նրա առջ և ոգևորւած նւագում էր:

Յանկարծ սառն իրականութիւնը ետ բերեց նրանց ցնորքների աշխարհից. դուռը սաստիկ խփում էին:

—Իսկոյն բաց արէք,—գոչում էր մի բարկացած ձայն,—եթէ ոչ կը ջարդեմ դուռը:

—Մայրիկն է,—սարսափով բացականչեց Աւգուստը ու բացեց դռան փականքը:

Մինիօնը քարացել մնացել էր ջութակը ձեռքին. նրա առջ կանգնած էին տանտիկինն ու Բրուենօն:

—Անպէտք արարած, ռոտեղից հանեցիր ջութակը,—կատաղութեամբ յարձակեց Մինիօնի վրա Աւգուստի մայրը,—ո՛վ է քեզ իրաւունք տւել խառնել, իրար տալ կտուրը:

Նա խլեց աղջկայ ձեռքից ջութակը և սկսեց նրանով գլխին վէր հատել: Աւգուստը իր ձեռքերով պաշտպանում էր Մինիօնին:

—Մայրիկ,—ասում էր նա,—սա մեղաւոր չէ, ես սրան տարայ կտուրը, մի՛ ծեծիր սրան, մայրիկ, խնդրում եմ, մի՛ ծեծիր:

—Կորի այստեղից,—բղաւելով կինը հրեց որդուն մի կողմ: Նա նորից շարժեց ջութակը, բայց ջութակը ձեռքից ընկաւ գետին: Աւգուստը ուղում էր բարձրացնի, բայց շար կինը մի կողմ գցեց նրան և սկսեց ոտներով կոխտել գործիքը:

Մինչև հիմա Մինիօնը անտրտունջ տանում էր ծեծը: Բայց երբ տեսաւ, որ իր ջութակը ոտի տակին է գցած, այն ժամանակ ուշքի եկաւ, մի ցատկով թռաւ դէպի իր տանջողը և փորձում էր դէնը քաշել նրան ջութակից:

—Հեռացիր, դու կը ջարդես իմ ջութակը,—ճչում էր նա. մի կողմ քաշելով տանտիկինը:

—Դու խելագարուել ես, յանգուգն աղջիկ, հեռացիր ինձանից: Բրուենօ, սրան ինձանից պոկիր:

Բրուենօն պինդ բռնեց աղջկայ ձեռքերից, թափահարեց օդի մէջ և ուժով գցեց յատակին, հէնց ջարդւած ջութակի

վրա: Մինիօնը յուսահատ ճչաց և լաց եղաւ:

— Գնա խոհանոց, դետնախնձոր մաքրիր, — հրամայեց տանտիրիկինը, ատելութեամբ նայելով որբ աղջկայ ետեկից:

— Աւգոստ, դու էլ իսկոյն ցած գնա, — գոչեց մայրը սանդուխտներէ վրայից:

Բայց տղան կանգնել էր Մինիօնի մօտ և աշխատում էր նրան մխիթարել:

— Ես քեզ համար ուրիշ ջութակ կառնեմ իմ փողով: Մի լար, Մինուշիկ, ես չեմ կարող տեսնել քո արցունքները, — ասում էր նա և նրա աչտերի վրայից գլորւում էին արցունքները:

— Թանկագին Մինուշիկ, ես հիմա կը գնամ, բայց յետոյ կը գամ, էլ լաց մի լինի, — շշնջաց նա և գնաց:

IX.

Փ Ա Խ Ո Ի Ս Տ Ը

Կէս ժամ անցկացաւ, մինչև որ Մինիօնը վեր կացաւ և գնաց ներքև: Արցունքները դեռ կաթկաթում էին նրա աչտերից, դէմքը ուռել էր ծեծից և լաց լինելուց: Այտի վրայի արնոտ սպին տալիս էր նրան աւելի խղճուկ տեսք: Նա եկել էր խոհանոց ոչ թէ բան անելու, այլ նա Գրիստինէի մօտ էր եկել մխիթարութիւն գտնելու, բայց Գրիստինէն այնտեղ չը կար և նրա փոխարէն օջախի մօտ կանգնած էր տանտիրիկինը կոնակը դէպի դուռն արած:

Աղջիկը սարսափով ետ թռաւ այդ կնոջը տեսնելիս, որն այնպէս խիստ ծեծել էր նրան. ամբողջ մարմնով դողալով նա ետ դարձաւ: Նոր ծեծ ստանալու վախը նրան թևեր տւեց: Նա դուրս եկաւ դարբասից, փողոցով վազեց, դուրս եկաւ մի այլ փողոց և սկսեց վազել: «Կորչեմ այս տնից», ահա այն միակ միտքը որ նրան առաջ էր մղում: Բայց ուր: Նա փախչում էր ու փախչում, ինքն էլ չը գիտէր թէ ուր,

միայն թէ այլևս չը վերադառնար այն շար կնոջ մօտ: Փախչելով նա դուրս եկաւ մի խճուղու վրա ու սկսեց այդ ճանապարհով վազել: Յանկարծ նա լսեց Բրուչոի ձայնը ու սկսեց վազել ինչքան որ ուժ ունէր, բայց բանից դուրս եկաւ, որ դա Բրուչոն չէր, այլ մի ուրիշ երեխայ, որ գալիս էր իր ետեկից: Մինիօնը տեսնելով որ իրեն հալածող չը կայ, կանգնեց և մի ազատ շունչ քաշեց:

Շրջակայքը լուռ էր և անդորր: Արևը թեքւել էր դէպի արևմուտք: Երբոր արևը ծածկւեց աչքից, երկինքը արևմտեան կողմում կրակի գոյն ստացաւ: Մինիօնը չէր տեսել արևի մայր մտնելը. լուռ, ձեռքերը կախած, նայում էր փոքրիկը հրեղէն ամպերին: Նա այնպէս էր իմանում թէ երկինքը բացւել է: «Հիմա ես կարող եմ երկինք գնալ: Ծառերի ետևում նա միտնում է երկրին: Ահա ես կը հասնեմ մինչև այնտեղ, կը գտնեմ երկնքի դռները և վերջապէս կը գամ իմ թանկագին հայրիկի ու մայրիկի մօտ»:

Այդպիսի յուսով աղջիկը նորից ընկաւ ճանապարհ: Ծանապարհի շուրջը անմարդաբնակ էր, ոչ ոք չը պատահեց նրան: Մի քիչ յետոյ անտառի մօտ պատահեց անտառապահի աղքատիկ տնակը: Դռան շէմքին նստած էր մի պառաւ:

— Ուր ես գնում դու, աղջիկ, — հարցրեց պառաւը Մինիօնին, — եկ հաց կեր:

Աղջիկը քաղցած էր: Նա ահամայ մօտեցաւ և մի կտոր հաց վերցրեց:

— Ի՞նչպէս դու կարող ես մենակ գնալ անտառով, դու կը մոլորւես այնտեղ, ճանապարհդ կը կորցնես, արդէն մոլթըն է: Ո՞րտեղ են քո ծնողները, ի՞նչ է քո անունը:

Մինիօնը չը պատասխանեց այդ հարցերին:

— Ես զարմանում եմ, — ասաւ պառաւը, — ի՞նչ ծնող լինի որ այս ժամանակ իրեն երեխին տանից հանի: Ամօթ իրենց:

— Ես պէտք է երկինք գնամ, — ասաւ Մինիօնը և շարունակեց ճանապարհը:

Նա չէր խափում, նա պէտք է երկինք գնար:

Մտնելով անտառ, նա կանգ առաւ: Ո՞ր ճանապարհով

գնայ, մեծ բանուկ ճանապարհով թէ միւս կողմի շաւիղով, որ անցնում է գետակի մօտով: Նա առաջինն ընտրեց: Շաւիղը անցնում էր ծառերի միջով, մութ էր. իսկ մեծ ճանապարհը լուսաւորում էր լուսինը: Սրա գունատ, երեւուն լոյսը մոլորեցրեց Մինիօնին: Բայց ի՞նչ եղաւ դուռը բաց երկինքը: Նրա առաջ անվերջ երկար ճանապարհն է, իսկ երկինքը դուռ չունի: Այլ ու ձախ բարձրանում են ծառերը: Ժամանակ առ ժամանակ ծառերի խշխշոցն է լսում, կամ մի թռչուն իր տեղն է փոխում, կամ թէ մողէսը խոտերի միջով վազում է և աղջիկը վախից վեր է թռչում: Մի քանի քայլ առաջ ճղնակոտոր ծառն է ընկել գետին: Լուսնու աղօտ լոյսի տակ նա մի ինչ որ հրէշ է երևում, մի ինչ որ խորհրդալուր նշան: Գնացած ժամանակ յանկարծ աղջկայ գլխի վրայից թռաւ բուն. երկիւղից աղջիկը ծածկեց աչքերը, սայթաքեց, կպաւ ծառի արմատին և ընկաւ, բայց վեր բարձրանալ արդէն չը կարողացաւ յոգնածութիւնից և ոտներիցաւից:


Նա այլևս չէր մտածում ոչ երկնքի ճանապարհի, ոչ ծրնողների հետ տեսնելու մասին. նրա մտքերը դարձան դէպի Քրիստինէն, դէպի նրա սենեակը: Նա մինչև անգամ ետ դառնալու մասին էր մտածում:

Աղջիկը խորը հառաչեց, յոգնած աչքերը փակեցին, բունը տարաւ նրան, իսկ երազում երևաց իր մահճակալը Քրիստինէի սենեակում: Ըննապարհի եզրին ձեռքը բարձի տեղ գլխի տակ դրած, պառկել էր գետնի վրա թշուառ որբը: Նրա շուրջը ճոճում էին ճուղիները: Խորը և անուշ քնել էր նա: Լուսինը վերևից լուսաւորում էր նրան և կարծես ասում էր. «Հանգիստ քնիր, անգին մանուկ, մի վախիր, ես քեզ կը պահեմ»:

Լուսադէմին մեծ ճանապարհի վրա երևաց մի օտարոտի կռք: Նա նման էր փայտէ կանաչ տանը, որի լուսամուտները ծածկւած էին վարագոյրներով: Զիւնների կողքից գնում էր մի մարդ, որ առապանի նմանութիւն չունէր, նա աւելի շուտ յիշեցնում էր աղքատացած դերասանի:

Դա Օսէփ Կերերլէն էր: Նա վերադառնում էր Ֆրանկֆուրտից, որտեղ իր չորքոտանի խմբի, այսինքն՝ մի շան, մի քանի կապիկների և երկու ձիերի հետ շուկաներում ներկայացումներ էր տալիս: Հիմա նա իր ամբողջ ընտանիքով, որին պատկանում էին և այս դերասանները, ուղևորում էր Էյզենախ քաղաքը: Նրա հոգին գեղեցիկ տրամադրութիւն ունէր, որովհետև նրա գործերը Ֆրանկֆուրտում շատ աջող էին գնացել, շարունակ նա իր քթի տակ շուկացնում էր: Յանկարծ նա դանդաղացրեց իր քայլերը և ձին կանգնեցրեց: Ըննապարհի մօտ պառկած էր մի քնած աղջիկ, բիշ էր մընացել ձին ոտի տակ առնի նրան:

— Սա ի՞նչ գիւտ է, — ասաւ նա զարմացած. — սա կենդանի երեխայ է: Էյ, զարթիր, — սկսեց նա ծշխել-շարժել երեխային:



Մինիօնը բաց արաւ աչքերը, բայց միանգամից չը կարողացաւ հասկանալ թէ ինքը որտեղ է դրսնուում և զար-

մանքով նայում էր օտարոտի մարդուն, որ թեքւել էր նրա վրա:

—Աղջիկ, դու ի՞նչպէս ընկար անտառ: Ի՞նչ ուրախ գիշերելու, ի՞նչ լաւ տեղ ես գտել:

Աղջիկը երկիւղով նայում էր խօսողի վրա:

—Ի՞նչպէս ընկար այստեղ. փախել ես տանից, հա:

—Նա ինձ այնպէս ծեծեց:

—Քեզ ով ծեծեց, մայրդ:

—Ոչ, չար կինը: Մայրս մեռած է, նա երկնքումն է, հայրս էլ երկնքումն է:

—Այդ այդպէս: Բա դու ուր ես գնում:

—Ձր գիտեմ,—պատասխանեց նա, նայելով դէպի հեռուն, կարծես դէպի երկինք տանող ճանապարհն էր որոնում:

—Ի՞նչպէս, գնում ես և չը գիտես թէ ուր ես գնում: Ես կեանքումս այսպիսի բանի չեմ պատահել: Փախչում է և չի իմանում ուր: Ի՞նչ է անունդ:

—Իմ անունը Մինիօն Բրանդ:

—Իսկ քեզ ծեծող կնոջ անունն ի՞նչ է, որի երեսից փախել ես: Դու դարձեալ նրա մօտ պէտք է վերադառնաս:

—Ոչ, ոչ, ինչ վերադառնալ,—յուսահատական ճիշտ արձակեց աղջիկը,—ի սէր Աստծու ինձ մի վերադարձնէք նրա մօտ:

—Ի՞նչ ես դու երկար ու բարակ խօսում,—ասաւ դերասանի կինը, որ լսում էր խօսակցութիւնը կառքի պատուհանից:—Բանը շատ պարզ է: Կը տանենք դրան քաղաք, կը յանձնենք ոստիկանատուն և ուրիշ ոչինչ:

—Դու ճիշտ ես ասում, այ կին,—ասաւ ամուսինը, խրփելով իր ճակատին,—դու խելացի կին ես: Է, աղջիկ, մտի՛ր կառքը: Դէ՛հ հիմա առաջ:

Նա մտրակով խփեց ձիերին, և կառքը առաջ շարժւեց: Մինիօնը մտաւ կատարեալ նոր աշխարհ:

Երբ որ Մինիօնը բաց արեց այն խեղդող, տաք վանդակի դուռը, նրան դիմաւորեց մեծ սպիտակ շունը և բարձր հաշելով դրեց իր ահագին թաթերը նրա ուսերին: Աղջիկը վախե-

ցած ետ ետ գնաց, կինը խփեց շանը, իսկ բազմոցի վրայից լսեց մանկան ձայն:

—Տիկին Պամպադուր, եկէ՛ք այստեղ, տէ՛ք ձեր թաթը. այ այդպէս: Շատ շնորհակալ եմ: Տիկին Պամպադուր, իմ շորերը բերէ՛ք:

Իսկապէս, խեղճ կենդանին բերեց շորս տարեկան երեխայի շորերը, որ նստել էր բազմոցի վրա և իր հօր պէս հրամայում էր:

Երեխան շորերը հագնում էր, յանկարծ մի ուրիշ անկիւնից դուրս եկաւ կապիկը և սկսեց նրա գանգուր մազերը սանրել:

Մինիօնը զարմանքից լուել-մնջւել էր,—նա այդպիսի բան չէր տեսել: Այդ քիչ էր, մէկ էլ նրա ետեւից լսեց.

—Յիմար, աւազակ: Բարի լոյս, Օսէփ:

Աղջիկը գլուխը ետ դարձրեց և տեսաւ օղակի մէջ օրօրող կանաչ թռչունը, որ նայում էր նրա վրա և կանչում.

—Աւազակ, յիմար:

Այդ ժամանակ կինը սուրճ եփեց և սեղանի վրա շարեց գաւաթները, դրեց հաց ու կարագ:

Մանուկը, որ քնած էր զամբիւղում և որի գոյութեան մասին Մինիօնը մինչև հիմի չը գիտէր, սկսեց բարձր ճչալ:

—Աղջիկ, սուրճ ածա՛, մինչև որ ես երեխային կերակրեմ: Սրճամանը վառարանի վրա է,—ասաւ կինը:

Մինիօնը արագ և հմուտ կերպով գործը կատարեց, բան անելը նա սովորել էր հացթուխի տանը: Բոլորը սեղան նրստեցին:

—Դու էլ արի, աղջիկ, խմի՛ր և կեր,—ասաւ կինը,—երևի վաղուց է որ տանից փախել ես:

ՔՐԻՍՏԻՆԷՆ ԹՈՂԵՈՒՄ Է ԻՐ ՏԵՂԸ

Մինիօնի փախուստից յետոյ երկու ժամ էր անցել, երբ որ Քրիստինէն վերադարձաւ տուն: Զիմանալով ինչ է պատահել, ուրախ մտաւ իր սենեակը ապակէ թուղունը ձեռին, որ առել էր աղջկայ համար: Մինիօնը տանը չէր, իսկ յատակին ընկած էր ջարդուած ջութակը: Քրիստինէն վախեցաւ: Ի՞նչ է պատահել իր բացակայութեան ժամանակ: Անհանգիստ սրտով գնաց խոհանոց իմանալու թէ աղջիկը այնտեղ է: Աւգուստը լացակամաց հարցրեց թէ Մինիօնին չէ պատահել, և յետոյ ամեն ինչ պատմեց Քրիստինէին, պատմեց թէ մայրըն ինչպէս ծեծեց Մինիօնին:

— Ծեծեց... միթէ... բայց հիմա ուր է աղջիկը, — հարցրեց Քրիստինէն:

— Զը գիտեմ ուր է. որտեղ ասես ման եկայ՝ չը գտայ:

— Այս ի՞նչ բան է, հիմա ժամը եօթն է, — բացականչեց Քրիստինէն: Թողեց ընթրիքի պատրաստութիւնը, վազեց դուրս, ընկաւ փողոցէ փողոց և պատահողին հարցնում էր թէ այսպիսի մի աղջիկ չեն տեսել: Մի քանի ժամ անհետեւանք թափառելուց յետոյ տուն վերադարձաւ այն յոյսով թէ աղջիկը տանը կը լինի: Բայց Մինիօնը չը կար: Բարկացած տանտիկինը սկսեց հայնոյել Քրիստինէին ընթրիքը չը պատրաստելու և երկար բացակայելու համար:

— Քո ի՞նչ բանն է թէ ինչ է եղել աղջիկը, նրա պատճառով քո տէրերին մոռանում ես: Նա ուր ուզում է թող գնա. եկաւ՝ եկաւ, չեկաւ՝ աւելի լաւ, ոչինչ չենք կորցնի:

Այդ խօսքերը Քրիստինէի համբերութեան բաժակը լցրին:

— Տիրուհի, կարելի է աղջիկը իրեն մի փորձանքի բերեց ձեր պատճառով, նրա մահւան պատճառը դուք կը լինէք:

— Դու երևում է որ խելագարւել ես, — գոչեց տանտիկինը, գունատելով այդ մեղադրանքից:

— Ո՛հ, ես չեմ խելագարւել, դուք անխիղճ կին էք. ես ճիշտն եմ ասում: Ես էլ չեմ լուի, լսեցէք: Հէնց առաջին օրից, երբ որ աղջիկը ձեր տան շէմքից ոտքը ներս դրեց, դուք սկսեցիք նրան տանջել և քրքրել: Ինչո՞ւ համար, ի՞նչ էր արել այդ անմեղ փոքրիկ արարածը: Բայց յիշեցէք, որ վերին Աստուած կայ: Ով գիտէ, ինչ է դուրս գալու քո սիրելի Բրունօից, նա ինչքան վիշտ է պատճառելու քեզ:

— Լռիր, անպիտան, իսկոյն կորիւր իմ տանից. այս ի՞նչ է, քո հարազատ երեխան է, որ այդպէս նեղանում ես:

— Քո արածը քո ոտը կը գայ: Ես էլ չեմ մնայ քո տանը, մի գիշեր էլ չեմ մնայ ձեր յարկի տակ առանց աղջկան: Դուք չը կարծէք թէ աղջիկը քնում էր վերնատանը, նա քրնում էր ինձ մօտ, իմ սենեակում, ես նրա մահճակալը դատարկ տեսնել չեմ կարող: — Ասաւ ու թիկունքը դարձրեց դէպի կատաղած տանտիկինը, և սկսեց հաւաքել իր իրերը: Նա հաւաքեց նոյնպէս Մինիօնինը, չը մոռացաւ Աւգուստի ընծայած կարմիր ժապաւէնը, հաւաքեց, կապոցը դրեց թևի տակը և հեռացաւ այնտեղից, որտեղ այնքան տարի ազնււթեամբ ծառայել էր:

Հացթուխը աշխատում էր համոզել նրան, որ չը հեռանայ իր տանից, խոստացաւ հէնց այսօր յայտնել ոստիկանութեան աղջկայ անյայտանալու մասին, բայց չեղաւ: Քրիստինէն գնաց: Աւգուստը առաջնորդեց Քրիստինէին մինչև նրա մեծ քրոջ մօտ և վշտացած վերադարձաւ տուն: Ծանապարհին աչքերով փնտռում էր Մինիօնին, բայց ոչ մի տեղ չը պատահեց:

Հացթուխը կանչեց Բրունօին և ասաւ նրան:

— Իսկոյն գնա ոստիկանատուն և յայտնիր աղջկայ փախուստը: Կարելի է աղջիկը մոլորւել է քաղաքի փողոցներում:

Լսելով ամուսնու խօսքերը, տանտիկինը լուռ դուրս եկաւ սենեակից և սպասեց Բրունօին:

— Զը գնաս ոստիկանատուն, ես այդ չեմ ուզում. — ա-

սաւ նա շնջալով, — ինչո՞ւ ուրիշները իմանան: Փառք Աստ-
ծու, որ նա կորաւ գնաց:

Ասաւ ու որդու ձեռքը փող դրեց:

Բրոնսոն գնաց, դէս դէն թափառեց, փողը մխսեց, յե-
տոյ հանգիստ տուն եկաւ:

— Մինիօնի մասին տեղեկութիւն ստացար, — հարցրեց
հայրը:

Բրոնսոն մի սուտ պատմութիւն ստեղծեց թէ ինչպէս
ինքը գնացել է ոստիկանատուն և ինչ է խօսել:

Մինիօնը չը վերադարձաւ հացթուխի տունը. նրա մա-
սին բոլորը մոռացան: Միայն Աւգուստը մտաբերում էր
թանկագին ընկերուհուն: Նա յաճախ գնում էր Քրիստինէի
մօտ իմանալու թէ ինչ եղաւ Մինիօնը, բայց միշտ միևնոյն
պատասխանն էր ստանում:

— Չը գիտեմ, Աւգուստ, ինչ եղաւ Մինիօնը: Մենք էլ
չենք տեսնի Մինուշին, շատ կարելի է նա մեռել է:

Քրիստինէն ողբում էր աղջկան, մեռած համարելով

XI.

Շ Ո Ւ Կ Ա Յ Ո Ւ Մ

Միայն երեկոյեան գէմ երկար թափառելուց յետոյ Կե-
բերլէն իր խմբով հասաւ էյգենախը: Նա պէտք է ամբողջ
քաղաքը անցնէր, որ հասնէր շուկան: Այնտեղ կեանքը եռում
էր: Ահա այնտեղ էր որ կանգ առան մեր ճանապարհորդները: Պ.
Կեբերլէն մի սրահ վարձեց և այնտեղ սկսեց իր գործը: Միւս
օրը պէտք է սկսէին նրա ներկայացումները:

Մինիօնը գիտում էր թէ ինչպէս ֆուրգօնից տեղափո-
խում էին կենդանիներին ներկայացման տեղը: Դուրս թռան
մի քանի կապիկ, չորս շուն և երկու սև ձի, որոնց կապել
էին դռան մօտ հասարակութեան ուշքը գրաւելու համար:

Միւս օր ներկայացման դռան վերևը կարմրին էր տալիս
խայտաբղէտ ցուցանակը շների և կապիկների նկարներով:

Ճաշից յետոյ սկսեցին ներկայացումները: Տիկ. Կեբերլէն
մանուկը գրկին նստած էր մուտքի առաջ և տոմսակ էր
վաճառում:

Անցաւ մի քանի օր, Կեբերլէն ժամանակ չունեցաւ
յայտնելու կորած աղջկայ մասին ոստիկանութեանը, դերա-
սանները խլում էին նրա ժամանակը: Նա պէտք է նրանց
կերակրէր, հնարքներ պէտք է սորվեցնէր:

Մինիօնը նոր ընտանիքի մէջ իրեն բախտաւոր չէր հա-
մարում: Ծիշտ է, նա ազատ էր և ոչ ոք նրան չէր տանջում,
բայց չէր կարողանում ընտելանալ այդ անկանոն կեանքին:
Այդ մարդկանց յաճախակի վէճերը և յիշոցները նրան սար-
սափեցնում էին. մինչև անգամ փոքրիկ Պրանցն էլ էր գոր-
ծածում կոպիտ խօսքեր, իսկ ախտն ու կեղտը, անկանոն
կեանքը զգալն էին զարթեցնում նրա մէջ: Ներկայացումներն
էլ նրան գրգռում էին: Նա լաւ գիտէր թէ ինչպէս մի փոք-
րիկ սխալի համար մտրակով պատժում էին խեղճ դերասան-
կենդանիներին: Տիկ. Պամպադուրը դարձաւ նրա ամենալաւ
բարեկամը: Նրա խաղը ամենից շատ էր ծիծաղեցնում աղջ-
կան: Շունը չափազանց խելացի էր:

Նրա հագած շորը պոչ ունէր, գլխարկը կլոր էր և փե-
տուրներով զարգարած, ման էր գալիս երկու թաթերի վրա,
իսկ կապիկը ֆրակ էր հագել թևերին սևեր կապած: Ծառա-
յում էր շանը, պնակով հաց և միս էր առաջարկում: Այնպէս
էլ էր պատահում, որ կապիկը մոռանում էր ծառայի դերը,
և ինքն էր թռչում սեղանի վրա, ատամները ցոյց տալով
տիկ. Պամպադուրին, երբ որ սա ուզում էր միսը վերցնել:
Բայց հէնց որ լսւում էր պ. Կեբերլէի ձայնը թէ՛ «պ. Ժակ,
այդ ի՞նչ ես անում, հրամցրո՛ւ քո տիրուհուն» և միևնոյն
ժամանակ սպառնում էր մտրակը, Ժակը իսկոյն դառնում էր
հլու ծառայ:

Բոլորից յետոյ առաջ էին գալիս փոքրիկ պոնիները. նրանք,
այսպէս ասած, կազմում էին ներկայացման փայլը: Պրանցը
հեծնում էր մէկ մի ձին, մէկ միւս ձին և մեծ հնարագիտու-
թեամբ խաղ անում: Դրա համար հանգիստ տեսները վարձա-

տրու՞մ էին նրան գանազան քաղցրաւէնիքով, իսկ նա իր շնորհակալութիւնն էր յայտնում օղային համբոյրներ ուղարկելով այս ու այն կողմ:

Մի անգամ Մինիօնն ու Ֆրանցը տանը մենակ մնացին: Պ. Կեբերլէն դուրս էր եկել. հէնց նոր էր կրկնութիւնը վերջացրել իր դերասանների հետ, նւագել պրծել էր և իր հին ջութակը թողել էր սեղանի վրա:

Մինիօնի աչքերը փայլեցին ջութակը տեսնելիս: Գործիքը խից տեղից և սկսեց նւագել: Ֆրանցը ծափահարում էր և երբ որ աղջիկը դադարեց, տղան բացականչեց:

— Էլի, էլի, դու հայրիկից լաւ ես նւագում:

— Դու իսկ և իսկ ճիշտ ես ասում, — ասաւ պ. Կեբերլէն, որ մի քանի րոպէ արդէն ականջ էր դրել դրսից. — աղջիկը հրաշալի է նւագում:

Այդտեղ նրա մէջ մի միտք ծագեց, որի մասին իսկոյն յայտնեց կնոջը.

— Աղջիկը թող մեզ մօտ ապրի, մենք նրան ոչ ոքի չենք տայ:

— Բայց եթէ նրան մեզ մօտ գտնեն. պատժից չենք պրծնի: Ոստիկանութիւնը կատակ չի անի:

— Ո՞ւմ է հարկաւոր որբը: Մենք գտել ենք նրան և ոչ թէ գողացել: Բան է, թէ ազգականներ էլ դուրս գան, ետ կըտանք նրանց: Իսկ հիմա մենք նրանով փող կաշխատենք: Լսիր, այ կին, աղջիկը կընստի ձիու վրա և ջութակ կը նւագի, հասկանո՞ւմ ես, ջութակ կը նւագի: Այդ դեռ չըտեսնւած բան է: Ի՞նչ ես ասում դու դրան:

Կինը համաձայնեց և Մինիօնին փորձի համար նստեցրին ձիու վրա: Աղջիկը բաւականին երկչոտ էր և ձին որ առաջին անգամ տեղից շարժւեց, նա ընկաւ գետին:

— Պինդ պէտք է նստես, — գրկեց Կեբերլէն և սանձը տւեց նրա ձեռքը: — Էլ վայր չընկնես, եթէ ոչ ես քեզ վայր ընկնել ցոյց կը տամ:

Դերասանը կամաց ձին ման բերեց բեմի շուրջը և Մինիօնն էլ չէր վայր ընկնում: Նա շուտով սովորեց ձիու վրա

պինդ և ուղիղ նստելը: Յետոյ սկսեց ձին քշել առանց սանձի, թէև այդ շատ դժւար էր:

— Երեք օրից յետոյ դու պատրաստ պէտք է լինես, եթէ ոչ վիզդ կ'ուրեմ, — ասաւ նրան Կեբերլէն:

Երեք օրից յետոյ Մինիօնը ձիու վրա նստած նւագում էր ջութակը:

— Այսօր երեկոյեան առաջին ներկայացումը կը լինի, — ասաւ Կեբերլէն կնոջը:

Նա կպցրեց ափիշն իր սրահին հետեւեալ մակադրութեամբ: «Մի առանձին չըտեսնւած ներկայացում: Համերգը կը կատարի պոնի ձիու վրա փոքրիկ Մինիօն Մակարօնին»:

Նա աւելացրել էր նրա անւանը խալական ազգանուն, որ դրանով կարողանայ աւելի մեծ տպաւորութիւն թողնել:


Եւ իսկապէս, նա չըսխալւեց: Կարմիր ափիշն և օտարազգի անունը գրաւեցին խուռն բաղմութիւն, ներկայացման սրահը լիփ-լեցուն էր և ամենը սպասում էին աղջկայ դուրս գալուն: Վերջապէս հերթը հասաւ Մինիօնին: Կարմիր վարագոյրի տակից դուրս եկաւ պ. Կեբերլէն բռնած Մինիօնի ձեռից: Մինիօնը հագել էր կարճ վարդագոյն շրջազգեստ, ուսերի վրա արծաթ թևերով: Նրա սաթի պէս սև հիւսերի վրա դրած էր վարդէ պսակ:

Նա ամաչելով աչքերը գցեց հասարակութեան վրա և միանգամից նւաճեց բոլորի սրտերը: Դեռ չէր նստել ձիու վրա, որ սկսւեց ծափահարութիւնը. ողջունում էին նրա դուրս գալը:

— Իսկ հրեշտակ լինի, — ասում էին շատ մայրեր և միջին և անգամ արտասուեցին, այնքան որ նա սիրունատես էր և գրաւիչ:

Պ. Կեբերլէն բարձրացրեց նրան ձիու վրա և ջութակը ձեռքը տւեց:

—Մի վախիր, մի ամաչիր, համարձակ նւագիր,— շշնջաց նա աղջկան, յետոյ մի թեթե խփեց ձիուն և Մինիօնը նւագեց։



Հովհ. Շառլոթ

Կնդկնդոցը սկզբում նա վստահ չէր քաշում, բայց յետոյ ձայնը քանի գնաց ուժեղացաւ։ Չէ՞ որ նա ջութակը նւագելիս մոռանում էր ամբողջ աշխարհը։ Նա մոռացել էր, որ մի ահագին բազմութիւն իրեն է նայում և ինքը նստած է ձիու վրա։ Նրա միտքը տարաւ իրեն հօր սենեակը։ Նրան այնպէս թւաց թէ հայրը կանգնած է իր առաջ, որ ինքը լսում է թանկագին հօր ձայնը, որ վերջին անգամ ասաւ նրան. «Թանկագին Մինիօն, նւագիր իմ սիրած մեղեդին»։

Բոլորը ցնծում էին և ոգևորւած ծափահարում։ Մինիօնը կամաց մօտեցաւ պ. Կեբերլէին, որը ուրախութիւնից վերացել էր։ Նա հսկայական ծրագիրներ էր կազմում և հաշուում էր այն օգուտը, որ տալու էր Մինիօնը։ Բայց յանկարծ նրա

օդային ամրոցները փուլ եկան։ Ներկայ եղողներին մէկը, մի փոքրիկ տղայ, ուզում էր մի նարինջ գցել, բայց նարինջը դիպաւ ձիու գլխին. ձին վախեցաւ և ետի ոտների վրա ծառա ելաւ, Մինիօնը սարսափելի ճշոցով կպաւ բաշից։ Չայնը աւելի ևս վախեցրեց ձիուն, նա կատաղութեամբ փախցրեց աղջկան։ Դեռ չէր վրա հասել պ. Կեբերլէն, որ արդէն Մինիօնը գետնի վրա էր և բարձր լալիս էր ցաւից։

Պատահմամբ ներկայ եղողների մէջ բժիշկ կար, որը օգնութեան հասաւ։

— Ոտը կոտրել է, — ասաւ նա, գննելով Մինիօնին, — տարէք սրան տուն։

Պ. Կեբերլէն միանգամից կոտրւեց. նրա բոլոր օդային ամրոցները փուլ եկան։ Լեզուն փակւեց և ոչինչ չըկարողացաւ խօսել։

— Տարէք հիւանդանոց, մենք չենք կարող դրան պահել, — մէջ մտաւ տիկ. Կեբերլէն։

— Միթէ սա ձեր աղջիկը չէ, — հարցրեց բժիշկը։

— Ոչ, մենք այդ աղջկան անտառում գտանք և խղճալով վրան մեզ մօտ վերցրինք։ Եթէ մենք չըլինէինք, հիմա կորած էր դա։ Ինչքան աշխատեցինք իմանալ թէ ում աղջիկն է, ո՞վ է, նա չասաւ։ Այսօր ամուսինս իմացնելու էր ոստիկանութեանը։

Պ. Կեբերլէն շատ բաւական մնաց կնոջ հնարագիտութիւնից։ Բժիշկը Մինիօնին առաւ թևերին և սկսեց ժողովրդի միջով դուրս գնալ։

Մի միջահասակ սղապգեստ կին բժշկին կանգնեցրեց։

— Դրէք դրան իմ կառքի մէջ, — ասաւ նա։ — Իմ տան մէջ դրա համար տեղ կայ։ Ես ինքս կըպահեմ այդ մանուկին։ Մի նայեցէք, սրա տխուր մեծ աչքերը ասես թէ իմ հանգուցեալ Բերտայի աչքերը լինեն։

Մինիօնին զգուշութեամբ դրին տիկ. Բրաունի կառքի մէջ։ Բժիշկը նստեց նրա մօտ և կառքը ուղևորեց դէպի հարուստ, անորդի այրի կնոջ տունը։

Հիւանդին պառկեցրին մի մեծ բարձր սենեակում, որի

լուսամուտները նայում էին դէպի այգին և բժիշկը իսկոյն սկսեց ոտը կապել:

Տիկ. Բրաունը մտքում վճռել էր մանկան իրեն մօտ պահել, բայց յետոյ նա մտածեց թէ ծնողները արդէն որոնելիս կըլինեն Մինիօնին, դրա համար էլ լրագրով յայտարարեց գտած աղջկայ մասին:

Բայց տէրը դուրս չեկաւ և տիկ. Բրաունը հանգստացաւ, իսկ Մինիօնը իրեն շատ բախտաւոր էր գգում բարի կնոջ մօտ:

Երբ որ Մինիօնը առողջացաւ, սկսեց գրել կարդալ սովորել. բայց դարձեալ նրա փայփայած միտքը ջուլթակ ունենալն էր և նւագելը: Տիկ. Բրաունը առայժմս լռել էր, թէ և վաղուց գիտէր նրա երաժշտական ընդունակութիւնները:

Միայն աշնանը, տեղափոխելով մայրաքաղաք, տիկինը հրաւիրեց իրեն ծանօթ մի յայտնի ջութակահար և խնդրեց որ փորձէ աղջկայ ընդունակութիւնները և երբ որ ջութակահարը նրա մէջ մեծ տաղանդ գտաւ, այն ժամանակ յանձնեց աղջկան մի յայտնի պրոֆեսորի, որ հետը պարապի:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Անցաւ ութը տարի: Փոքրիկ Մինիօնը արդէն գեղեցիկ շահել աղջիկ էր և բաւական յայտնի ջութակահար: Տիկ. Բրաունը հպարտանում էր իր որդեգրով և ուղեկցում էր նրան քաղաքէ քաղաք երաժշտական պտոյտների ժամանակ:

Մի անգամ Մինիօնին հրաւիրել էին իր յայտնի պրոֆեսորի հետ Ֆրանկֆուրտ համերգ տալու, այն քաղաքում, որտեղ մի ժամանակ այնքան դժբախտ էր եղել ինքը: Ութը տարի էր որ հեռացել էր այդ քաղաքից. դեռ փոքրիկ մանուկ, նա ժամանակի ընթացքում մինչև անգամ մոռացել էր այդ քաղաքի անունը:

Տիկ. Բրաունն ու Մինիօնը երեկոյեան դէմ մտան Ֆրանկֆուրտ և վէր եկան այն հիւրանոցը, որ շուկայի հրապարակի վրա էր: Միւս օրը առաւօտեան Մինիօնը դուրս եկաւ պատշգամբ և յանկարծ նրա մտքումը զարթնեցին յիշողութիւններ:

Այ ջրհորը, այ անկիւնի տունը, սրանք իրեն ծանօթ են: Միթէ դա հացավաճառի տունը չէ: Այո, այո, ահա և ցուցանակը, գրած է «Տոնցի հացատունը»: Այո, այո, այս այն քաղաքն է, որտեղից ինքը յուսահատել փախել էր: Նա իսկոյն հաղորդեց այդ մասին տիկ. Բրաունին և խնդրեց, որ գնան Քրիստինէին գտնեն:

Տիկ. Բրաունը սիրով համաձայնեց, բայց որ Մինիօնը չէր ուզում ոտը կոխել իրեն համար այնքան ատելի տան շէմքից, տիկ. Բրաունը մենակ մտաւ հացատուն, որ բան իմանայ Քրիստինէի մասին: Հացավաճառ կինը առաջւայ նման նստած էր լուսամուտի մօտ սգի շորերով: Դէմքի արտայայտութիւնը մռայլ էր և բերանի շուրջը վշտից և տխրութիւնից ծալքեր էին դոյացել:

Նա զարմանքով և հետաքրքրութեամբ էր նայում Քրիստինէին հարցնող այդ մեծատուն կնոջ վրա և բաւական բարկացած պատասխանում էր թէ Քրիստինէն վաղուց արդէն մարդու է գնացել և ապրում է Աւազի փողոցի վրա, որտեղ է և իր հացատունը:

Տիկ. Բրաունն ու Մինիօնը իսկոյն և եթ գնացին աւած հասցէով: Երբոր կառքը կանգ առաւ հացատան առաջ, այդ ըողէին Քրիստինէն կանգնած էր դռանը: Մինիօնը իսկոյն ճանաչեց նրան, վրա վաղեց և ընկաւ նրա վզովը:

— Քրիստինէ, անգին Քրիստինէ, միթէ դու ինձ մոռացել ես, — ասում էր Մինիօնը, համբուրելով նրան, — միթէ դու չես ճանաչում քո Մինուշին:

— Մինուշս, քնքուշ աղանիս, — բացականչեց Քրիստինէն, լալով և ծիծաղելով ուրախութիւնից և զարմանքից: — Ես քեզ վաղուց մեռած էի համարում:

Քրիստինէն իր ամուսնուն էլ կանչեց, որ նա Մինիօնին տեսնի և հիանայ: Յետոյ տիկ. Բրաունը և Մինիօնը մտան Քրիստինէի համեստ բնակարանը: Մինիօնը իր զլխից անցածը մէկ մէկ պատմեց: Քրիստինէն հա ծիծաղում էր, հա լալիս էր լսելով աղջկայ պատմութիւնը:

— Ես միշտ ասում էի, որ երկնքում արդարութիւն կայ:

Թշուառ որբը, Մինուշո իրեն համար սիրող մայր դտաւ, իսկ չար կինը ինքն է հիմա անբախտութեան մէջ: Տղաները տեղը հանեցին: Աւզուստը լաւ տղայ է, կուրտը մի տարի առաջ մեռաւ, իսկ Բրուսօն, որին այնքան երես էր տալիս, նրա աչքը հանեց: Նրան վաճառականի մօտ ծառայելու տւին, բայց նա դրամարկը կոտրեց ու փախաւ Ամերիկա: Մայրը ծերացել է վշտից: Ամուսինը վեց շաբաթ է որ մեռել է կաթնածից, և հիմի ինքը պէտք է բոլոր ծանրութիւնն ու վիշտը տանի:

— Ի՞նչ ուշ է Աւզուստը, — հարցրեց Մինիօնը:

— Նա երաժիշտ է դարձել: Նա չէր մոռանում, թէ դուք միասին ինչպէս համերգներ էիք տալիս: Հիմա նա գեղեցիկ նւագում է: Բայց ափսոսում եմ տիկ. Տուցի հացատանը: Նա ծախելու է և կանցնի անարժան մարդկանց ձեռքը, եթէ մենք փող ունենայինք, իսկոյն կառնէինք այդ հացատունը:

Իրարից բաժանելիս տիկ. Բրաունը ասաւ Քրիստինէին:

— Այսօր ժամը 7-ին եկէք Արքայական հիւրանոց և ինձ հարցրէք. ես ձեզ կը տանեմ Մինիօնի մօտ:

Երեկոյեան համերգի մեծ դահլիճում փայլում էին հազարաւոր ճրագներ, լաւ հագնւած հասարակութիւնը խոնկել էր անցքի առաջ: Տիկ. Բրաունը Քրիստինէին տարաւ դահլիճ: Սկզբում հասարակ կինը ամաչում էր ներս գնալ, բայց տիկ. Բրաունը առաջնորդեց նրան և նստեցրեց իրեն մօտ առաջին շարքում:

Համերգը սկսեց մի նախերգով, որից յետոյ դուրս եկաւ Մինիօնը իր պրոֆեսորի հետ: Հասարակութիւնը ցնծութեամբ ողջունեց գեղեցիկ դեռահաս աղջկան: Նրա խաղը բոլորին յայտնի էր. եթէ մի քանիսն էլ չէին լսել, բայց կարգացել էին նրան աւած գովասանքները. համեստ ու նազելի կերպով նա գլուխ էր տալիս ամեն կողմից:

— Մինուշո, — բաւական բարձր բացականչեց Քրիստինէն և բռնեց տիկ. Բրաունի ձեռքը, — նայիր, Տէր Աստուած, ի՞նչ է դառել այն պատիկ աղջիկը: Երանի խեղճ հայրը կենդանի լինէր և իր աչքովը տեսնէր:

Մինիօնը նւագելիս, լիքը լցած դահլիճը այնպէս լուռ

էր, որ ճանճի թռչելու ձայնը կը լսէր: Բոլորը հիացել էին, իսկ Քրիստինէն ուրախութիւնից լալիս էր, երբ որ նա համերգից յետոյ նկարագրում իր էր ամուսնուն Մինիօնի նւագը, ասում էր թէ իրեն այնպէս էր թւում, որ կարծես թէ հրեշտակները դաս-դաս երգում էին երկնքում, նրանք երգում էին երբեմն ուրախ, երբեմն տխուր, այնպէս որ ինքն ուզում էր լաց լինել: Եւ ի՞նչպէս նա գեղեցիկ էր իր թանկագին մետաքսէ շրջագոյնով, մագերին հագցրած ոսկէ օղակով, իսկ և իսկ հեքիաթական փերի:

* *

— Մայրիկ, — ասաւ Մինիօնը քաղաքից գնալու նախընթաց օրը, — ես քեզանից մի խնդիր ունիմ: Ես ուզում եմ մինչև մեր գնալը ուրախացնեմ Քրիստինէին: Չէ՞ որ նա իմ պահապան հրեշտակն է եղել իմ կեանքի այն ծանր օրերին:

— Այո, այո, — ասաւ տիկ. Բրաունը, համբուրելով աղջկայ ձախտը, — այդ շատ լաւ բան է, որ դուն ուրիշի արած լաւութիւնը չես մոռանում:

Նա բացարեց փողի արկղիկը, որտեղ շատ ոսկի կար:

— Այս բոլորը քոնն է, դուն այս փողերը ստացար այս վերջին համերգից. ինչպէս ուզում ես, այնպէս կարգադրիր:

Միւս օրը առաւօտ Մինիօնը մնաս բարով ասաւ Քրիստինէին, որը առաջնորդել էր նրան գերեզմանատուն հօր շիրիմը տեսնելու:

— Երանի թէ նա կարողանար քեզ տեսնել և լսել, Մինուշո, — հառաչեց Քրիստինէն:

— Նա ինձ տեսնում էլ է, լսում էլ, Քրիստինէ, նա միշտ ինձ հետ է եղել, — ասաւ Մինիօնը, — առանց նրան ես այժմեան Մինիօնը չէի դառնալ: Երբ որ ես կնդկնոցը կպցնում եմ իմ ջութակի լարերին, զգում եմ հօրս մօտիկութիւնը. նա ժպտում է ինձ և յաճախ ես լսում եմ նրա խօսքերը:

— «Լաւ է, Մինիօն, դու այս շատ լաւ նազեցիր»:

Մինիօնի գնալուց յետոյ Քրիստինէն մի փողի ծրար ստացաւ հետեւեալ մակագրութեամբ. «Իմ թանկագին Քրիստինէին՝ Տուցի հացատունը առնելու պակասորդ փողը: Երբ որ կը նստես քո տան լուսամուտի առջև, երբեմն յիշիր այն անտէր որբին, որին դու այնպէս սիրով էիր վերաբերում:

Քո Մինուս»

«Բա Լայպզ»







Հայ.
500 1573



